

ԳԷՊԻ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 2

## ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Բ -

# ՖԻՆԱՆՍ

ՀՐԱՏԱՐ ԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ՄՈՆԹՐԷԱԼ

1997



**ՖԻՆԱՆՍ**

**FINANCE**

Կողքին՝ Հեթում Թագաւորի մետաղադրամը, ժԳ. դար:

**ԳԷՊԻ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 2**

**ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ**

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

- Բ -

**ՖԻՆԱՆՍ**

**ՀՐԱՏԱՐ ԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ  
ՄՈՆԹՐԷԱԿ  
1997**

Malkhassian, Megrditch  
Armenian National Paradigms: Finance

Copyright © 1999 by Malkhassian Foundation.  
All rights reserved under international and Pan-American Copyright  
Conventions.  
No part of this publication may be reproduced or transmitted in any form or  
by any means, electronic or mechanical, including any information storage  
retrieval system, without written permission from the author.

MAYRENI PUBLISHING 1997

Մալխասեան Հիմնարկութեան Տնօրէններու Խորհուրդին համար պատրաստուած այս ՖԻՆԱՆՍ Բեռագօտութիւնը անվճար պիտի բաժնուի Հայաստանի Հանրապետութեան և Սփիւռքի ուսումնական հաստատութիւններուն, կրթական-հասարակական գործիչներուն և պաշտօնավարներու՝ տեսակէտներ և առաջարկներ ստանալու ակնկալութեամբ:

Ընթերցողէն կը խնդրուի իր տեսակէտը փոխանցել հետևեալ հասցէին՝

The Malkhassian Foundation  
1922 ouest, Ste-Catherine  
Montréal, Qué. H3H 1M4

Կանխաւ շնորհակալութիւն՝ թէ՛ խրախուսելիք և թէ՛ ընդդիմախօսելիք բարեկամներու:

Նաև շնորհակալութիւն՝ տիկնոջս՝ Ծաքէին, և թանկագին բարեկամիս՝ Զարեհ Մելքոնեանին, որուն աշխատանքը այս գործին սկզբնական խմբագրութեան մէջ անգնահատելի է:

**Մ.Մ.**



## ՄՈՒՏՔ

Հայ Ազգային Վերակերտումի Առաջարկներու գծով կրնայ հարց ծագիլ թէ ինչո՞ր ՖԻՆԱՆՍ-ը տասը կարևորագոյն սիւներէն մէկն է: Ինչո՞ր միւնչն աչսօր ան նկատի չէր առնուած և յանկարծ՝ այս կարևորութիւնը:

Դիմենք բնութեան օրինակին: Ինչո՞ր Սահարայի անապատին մէջ բաւարար անձրև չի գար և կեանք համարեա գոյութիւն չունի: Որովհետև չկան գետեր ու լիճեր այդ անապատին մէջ. հետևաբար՝ չկայ գոլորշիացում, ուստի և չկան ամպեր ու անձրև:

Եթէ Հայաստանի ֆինանսական տարածքը նկատենք Սահարա մը, իսկ ջուրը նմանեցնենք դրամի և դրամի փոխարժէքներու աւազաններու, անմիջապէս պիտի նշմարենք թէ անձրևաբեր հատ ու կենտ ամպեր (Համաշխարհային Դրամատուն, Դրամական Միջազգային Հիմնադրամ, մարդասիրական օժանդակութիւններ) բաւարար չեն մնայուն կեանք ստեղծելու հոն:

Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական Դրամատան նախագահ Բ. Ասատրեանին հետ հանդիպելէ և իր ստորագրած հաղորդագրութիւնները ընթերցելէ յետոյ կազմած ենք այն հաստատ համոզումը՝ թէ ան փայլուն ընդունակութեան տէր անձնատրութիւն մըն է և լաւ ըմբռնած է կեդրոնական դրամատան դերը՝ շնորհիւ իր մարզիչներուն (Համաշխարհային Դրամատուն, Դրամական Միջազգային Հիմնադրամ) խորհուրդներուն:

Բայց ներկայ հանգրուանին Կեդրոնական Դրամատան դերը կը սահմանափակուի Հայաստանի Հանրապետութեան վարկատուներ (creditors) ապահովելու և զանոնք գոհացնելու մէջ, փոխանակ իր ուշադրութիւնը հայ հասարակութիւնը ապահովելու և գոհացնելու վրայ կեդրոնացնելու: Տասնեակներով դրամատուներ սնանկացած են արդէն Հայաստանի Հանրապետութեան մէջ և կարևոր վնասներ հասցուցած իրենց ներդրումներուն (investors):

Քիչ մը ատելի վեր բարձրանալով, երբ նկատի առնենք Հայաստանի Հանրապետութեան բարձր պաշտօնատարներու կեցածքը, անհաւանական չէ որ ականջալուր դառնանք «ի՛նչ հայ ազգային ֆինանս» բացականչութեան: Որովհետև ամէն ինչ որ ազգային է, թիրիմացաբար կ'ընկալուի ու կը ներկայացուի որպէս ֆաշիստական՝ խորհրդային շրջանէն բոյն դրած մտայնութեամբ մը: Իսկ մեր

«մտային բուսակութեամբ փայլող շինովնիկները» գրեթե բառացիորեն կ'որդեգրեն վերէն եկած ամէն գաղափար:

Մինչ այդ, ժողովուրդը կարիքն ունի,- հացի և ջուրի նման,- ֆինանսի առազաններու, որպէսզի գո'րծ ստեղծուի: ՀԱՅՈՅ ԲԵՐԴԻՆ կարիքն ունի ժողովուրդը:

Ֆինանսային առազան մը՝ որուն հասցէն ըլլան Հայաստանի Հանրապետութիւնը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, և որ օրը քսանչորս ժամ շարունակ գործէ ու հսկէ որ Հայ Ազգային Վերակերտումի նշանակէտներէն մէկն ըլլայ հայոց հայրենիքին և հայ ժողովուրդին ֆինանսային ինքնաբաւութիւնը:

Այս կը նշանակէ ապահովել՝ միջոցներու միջոցը՝ ՖԻՆԱՆՍԱԸ, ստեղծելու համար գործեր, որոնք, իրենց հերթին, պիտի ծառայեն կենսամակարդակի բարձրացումին:

Եթէ այսօր հարց տանք մենք մեզի՝ թէ հայ մը կարևորագոյն ի՛նչ արարք կրնայ գործել Հայաստանի Հանրապետութեան օգուտ-կար դառնալու համար, անվարան պիտի պատասխանենք.- Հայաստանի մէջ ԳՈՐԾ ՍՏԵՂԾԵԼ:

Հոգ չէ թէ գործը ստեղծուի կրատրական (passive), միջանկեալ (intermediary) կամ ներգործական (active) կերպով:

Գործի ստեղծման կրատրական կերպ մըն է, օրինակ, վանք մը վերակառուցելը: Անմիջական հետևանքը կ'ըլլայ մինչև շինութեան աւարտը վարպետներ աշխատոցնել, իսկ հետահաս հետևանքը կ'ըլլայ զբօսաշրջիկներ հրապուրել:

Միջանկեալ է, օրինակ, օրական ջերմուկի շիշ մը սպառելը կամ հաշկական ոգելից խմիչք մը գնելը:

Ներգործական է մնալուն ֆինանսական կապ հաստատելը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններուն հետ՝ առնել-տալու, տալ-պահանջելու, նոր-անսովոր-գործնական գործեր ստեղծելու նպատակով:

Նոր-անսովոր-գործնական գաղափարներ պարտին խարսխըլի հայ ժողովուրդի կրթական մակարդակին և Հայաստանի ու Արցախի աշխարհագրական դիրքերուն վրայ:

Հաշկական Սիփոքը օգտակար կրնայ ըլլայ փոխադրական ծախսերը (transportation costs) նուազագոյնի իջեցնող և շահութաբերութիւնը (return of investment) առաւելագոյնի բարձրացնող հետևեալ մարզերուն մէջ՝ համաշխարհային չափանիշով որակաւոր նոր գործեր ստեղծելու առումով.-

- 1- Ապահովագրագէտ-actuarian/դրամավար-money manager կէանքի  
եկամուտի/թոշակի  
առողջապահութեան  
արկածներու

- 2- Միջազգային ֆինանսի գօտի  
դրամատնային  
աւանդային (trust)  
թոշակային  
սակարանային (stock market)  
Համահայկական (Pan-Armenian Bond Issues)
- 3- Առողջապահություն  
ֆինանդանցային  
յետ-ֆինանդանցային  
դեղ օրայք
- 4- Զբօսաշրջություն  
հայ  
ոչ-հայ  
պանդոկային/փոխադրական
- 5- Կրթական

Այս վերջինին մակարդակը թէև յուսահատական է, բայց ճիշդ հո՛ւս է որ մեզի առիթներ կը ներկայանան լումայ մը ներմուծելու: Ինչպէս օտարներ կ'ըսեն՝ opportunity in adversity:

Վերը նշուած հինգ մարզերը, իրենց հերթին, գործեր կը ստեղծեն համակարգիչներու և շուկայադրումի (marketing) մարզերուն մէջ: Հարկ է նկատի ունենալ որ հարուստ երկիրներու արտադրութեան 60 տոկոսը սպասարկութիւններու (services) մարզէն կը բող-խի, մինչ Հայաստան համարեա գորկ է նման արտադրութենէ:

Մեր պահանջքը յետ-արդիւնաբերական (post-industrial) սպասարկութիւններու մարզը զօրացնելն է Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի հանրապետութիւններուն մէջ:

Յարակցաբար, պարտինք հասնիլ հո՛ւն, ուր իւրաքանչիւր հայ անհատ, այր թէ կին, ունենայ դրամատնային հաշիւ: Այս ինքնի՛ն նոր-անսովոր-գործնական ըլլալ կը նշանակէ նաև ա՛յս մարզին մէջ, հաւանականութեամբը ընկերային բարերար յեղաշրջումի մը:

Եթէ կ'ուզենք հասնիլ ազգային ֆինասական ինքնաբաւութեան՝ հարկ է որ քով-քովի բերենք մեր ֆինանսները և կարող դրամավարներու գործ տրամադրելով բոլորս ալ օգտուինք:

Ինքնաբաւութեան ձգտող Հայ Ազգային Ֆինանսական քաղաքականութեամբ և Հայաստանի ու Լեոնային Ղարաբաղի սպասարկութիւնը իրենց ուշադրութեան առանցքը դարձուցած պետական կառոյցներով քսան տարիէն նոր Զուիցերիա մը կը ստեղծուի Կովկասի մէջ՝ ԵԹԷ ԲՈՒՈՐՄ ՀԱՄԱԶԱՅՆԱԲԱՐ ԱՇԽԱՏԻՆՔ:

## ՄԿՐՏԻՉ ՄԱՆԻԲԱՍԵԱՆ

---

Ֆինանսը առևտուրներու հզօրագոյնն է.

Հայ ազգը թէև ունեցած է և ունի զաւակներ, որոնք ֆինանսի իշխաններ են՝ հայ ժողովուրդը, որպէս ազգ, ապրած է ու կ'ապրի տակաւին ֆինանսային չքատրութեան մէջ.

Եթէ պիտի լսուի մեր ձայնը, ու եթէ մաս պիտի կազմենք ժողովուրդներու ընտանիքին՝ պէտք է խօսինք ֆինանսի լեզուն, պէտք է յատաճանանք ֆինանսի ճանապարհէն:

Պէտք է մենք մեզ մօտեցնենք ֆինանսի միջազգային իրականութեան՝ գործելակերպի և մակարդակի տեսակէտէն:

---

**ՏԻՆԱԿՍ**

## **ԸՆԾԱՅԱԿԱՆ**

«Ֆինանս» հետազոտությունը  
գնահատանքով կ'ընծայեմ  
լոնտոնաբնակ երիտասարդ բարերար և  
գործարար ՎԱՁԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ին,  
որ Հայաստանի մէջ միջազգային  
դրամատան մասնագիտի մը  
հաստատումով՝ կը ներկայանայ իբրև  
տիպար հայը, զոր նկատի ունինք մեր  
ազգային ֆինանսական վերակերտումի  
աշխատանքներու ծիրին մէջ:

**Մ.Մ.**

## I- ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

### Ա.- ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

#### ՖԻՆԱՆՍ-ը՝

«Դրամը որպես **ապրանք** գործածելով՝ դրամ շահելու գիտությունն է»:

#### ՖԻՆԱՆՍ-ը՝

«Ընթացիկ գործառնություններու այն մասն է, որ կապ ունի դրամին հետ՝ «դրամ» բառին լայն առումով,– Թղթադրամ, մետաղ–դրամ, վարկանիշ (credit money), դրամատոնային վարկ (bank credit), և այլն»:

ՖԻՆԱՆՍ-ին վերագրուող անմիջական նպատակն է՝ ապահովումը «պատրաստ կանխիկի» և «պատրաստ վարկի»:

### Բ.- ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճարտարարուեստը, Առևտուրը և Ֆինանսը՝ Տնտեսության գլխատր բաղադրիչներն են:

Երկրի մը տնտեսության (economy) զօրությունը և կեանքի մակարդակը սերտորեն կապուած են իր ֆինանսական վիճակին, ու փոխադարձաբար:

Երկրի մը միջազգային դիրքը կախում ունի իր ֆինանսական ուժէն, իր ֆինանսին հաւասարակշռութենէն:

Դրամը կրնանք նմանցնել մարմինի մը արիւնին: Ֆինանսը՝ արիւնի շրջագալութեան դրությունն է: Որպէսզի երկիր մը ըլլայ տնտեսապէս առողջ՝ կենսակա՛ն է որ իր ֆինանսը ըլլայ տեսական շարժումի մէջ, դրամը՝ տեսական շրջանառութեան: Այլապէս երկրին կառոյցը կը սկսի փտակել (կանկրէն) կազմելով՝ ինչպէս կը կապէ մարմի մը մէկ մասը, եթէ արիւնը դադրի շրջանառութենէ:

Լուրջ վտանգ մըն է նաև մնայուն արիւնահոսությունը (երկրի մը պարագային՝ պիտճէի յարաճուն բացը), որ կը պատճառէ անարիւնություն (anemia) և կ'առաջնորդէ քայքայումի ու մահուան:

## II- ՖԻՆԱՆՍԸ

### Ա.- Դրամը

Ֆինանսը չափելու համար կը գործածենք միատր մը, որ կը կոչենք ԴՐԱՄ (չշփոթել՝ այս մէկը Հայաստանի մէջ գործածուող դրամական միատրին հետ): Ի՛նչ ալ ըլլայ դրամը,- տղար, ուրբի, ֆրանք, շիլինկ թէ եւէն,- իր իմաստն ու բնոյթը չեն փոխուիր:

Ինչ որ փոփոխական է՝ ֆինանսի յանձանձումի (management) նպատակն ու գործելակերպն է, փիլիսոփայութիւնը:

Դրամ-ը ունի զանազան գործածութիւններ.

ա.- Նախ՝ կարելի է դրամ-ը գործածել «դրամ արտադրելու համար»՝ տոկոսի տալով զայն:

բ.- Ապա՝ կարելի է դրամ-ը գործածել որպէս «միջոց»՝ ստեղծելու համար այլազան արդիւնաբեր ձեռնարկներ:

Ֆինանսը կրնայ ըլլալ հնչուն դրամ, կամ թղթադրամ՝ ոսկիի և որիշ թանկարժէք մետաղներու համապատասխան պաշարով մը երաշխաւորուած:

Երկրի մը ֆինանսը (դրամական հարստութիւնը) կրնայ մեծապէս ազդուիլ (դրապէս կամ բացասապէս)՝ տիրող քաղաքական ապահովութեան չափէն և ժողովուրդին արտադրողականութեան մակարդակէն: Բայց մանաւանդ՝ տուեալ ժողովուրդին դրամի նկատմամբ ունեցած յանձանձումի (management) հաւաքական փորձառութենէն:

### Բ.- Ֆինանսի մարզերը

Գլխաւոր մարզերն են՝

- Դրամատուն (bank)
- Դրամի շուկայ (money market)
- Ծախարկումի շուկայ (investment market)
  - ա.- Սակարանը (the stock exchange)
  - բ.- Նոր դրամագլուխներու գոյառումը (new capital issues)
- Արտաքին փոխանակութեան շուկան,- հազուագիտ դրամանիշի մարզը
- Ապահովագրութիւն (insurance)

- Թոշակի ֆոնդեր (pension funds)
- Զօրակցութեան ֆոնդեր (solidarity funds)<sup>1</sup>
- Այլ և այլ առանդներ (trusts)

ՀԱՆՐԱՅԻՆ (պետական) ֆինանսը տարբեր և անջատ համակարգ (category) մըն է. անով պետութիւնը դրամ կը հայթայթէ իր վճարումներուն համար՝ հետևեալ երեք գլխաւոր աղբիւրներէն.

- Տուրքեր (taxation)
- Փոխառութիւն (borrowings)
- Ուրիշ աղբիւրներ,– պետական ձեռնարկութիւններ (նամակատուն, հեռագիր, հեռաձայն), երկաթուղի, կալուածներ, ջրուժ (hydro-energy):

#### **Գ.– Ֆինանսը որպէս ուժ և մօտեցում**

Հարուստ ազգերը անոնք են, որոնք ունին հարուստ անհատներ և կեանքի մակարդակով բարձր քաղաքացիներ. բայց բուն խնդիրը այն է, որ պէտք է գոյութիւն ունենան հարուստ խմբակցութիւններ, ի վիճակի իրենց դրամական միջոցները շահարկելու միջազգային հրապարակին վրայ, և ապահովելու անոնց անընդմէջ աճումը:

Փոխառութիւնը ընել կարենալ պետութեան մը կամ պետութիւններու՝ քաղաքական ու ընկերային ամենէն մեծ ուժերէն մէկն է:

Կան երկիրներ և ընկերութիւններ, որոնք այնքա՛ն տրամադրելի յաւելեալ դրամագլուխ (disposable capital) կուտակած են, որ զանոնք շահարկելու համար շուկաներ կը փնտռեն:

Այս յաւելեալ գումարներուն համար շուկաներ փնտռելը կը կոչուի «շահամէտ գործարք» (speculative investment):

#### **Դ.– Պետական բացը**

Հիմնական խնդիրն է պետութիւններուն՝ անոնք փոքր ըլլան թէ

---

1 Իբրև օրինակ առնենք F.T.Q.-ի Աշխատատուներու Զօրակցութեան Ֆոնդը.–

մօտաւորապէս 2/3-ը դրամատերերու

մօտաւորապէս 1/3-ը փորձանաւոր դրամագլուխ (risk capital)

Ծահութաբերութիւնը (return of investment)՝ տարեկան առնուազն 20 տոկոս, պայմանաւ որ ճիւղ տարի շարունակ ո՛չ մէկ եկամտոս ստացուի անկէ: Այսպիսով, ճիւղ տարի ետք սկզբնական ներդրումը կրկնապատկուած կ'ըլլայ: Կորսնցնելու վտանգը մշտակալ է:

F.T.Q.-ն ներդրումին մէկ մասը կը շահարկէ աշխատատուներու թոշակի հիմնադրամին մէջ, ուրիշ մաս մը՝ աշխատատուներու զօրակցութեան հիմնադրամին մէջ՝ իբրև փորձանաւոր դրամագլուխ:

մեծ: Աշխարհի ամենէն հուժկու և տիրակալ պետութիւնն իսկ գերծ չէ այդ ահեղ մտահոգութենէն: Օրինակ, ԱՄՆ-ի տնտեսական թիւ մէկ խնդիրն է իր պիտոճէին բացը:

Պետական խոշոր բաց մը կը սպառնայ արծարծել դրամաճը (դրամաճում-inflation) և արգելք ըլլալ որ շարունակուի երկրին տնտեսական բարգաւաճումը: Իսկ գեր-ծախսումը (over-spending) և ստորահարկումը (under-taxation) կրնան միմիայն բազմապատկել պետութեան պարտքը:

Բացառութիւն չէ Հայաստանի Հանրապետութիւնը: Անոր ալ թիւ մէկ լուծում պահանջող հարցն է «պետութեան բացը»:

Դրամաճը (inflation) կամ դրամակծկումը (deflation), դրամին փոխարժէքը՝ յարաբերաբար այլ դրամանիշներու, խնայողութիւններու և թոշակներու ներկայ և ապագայ գնողականութիւնը (արժէքը), ապագայի հանդէպ անապահովութեան զգացումը և շատ այլ կենսական հարցեր կախեալ են անկէ:

Համաշխարհային կշիռ ունեցող երկրի մը, օրինակ՝ ԱՄՆ-ի, պիտոճէին բացը կը մտահոգէ նաև իր դաշնակիցները՝ երեք գլխաւոր պատճառներով. նախ՝ որովհետև կը նշանակէ տոկոսի սակին բարձրացումը բոլոր երկիրներուն մէջ. երկրորդ՝ կը մատնանշէ ԱՄՆ-ի անկամեցողութիւնը հետամուտ ըլլալու իր ներքին տնտեսական բարգաւաճումին. և ուրեմն՝ երրորդ՝ հաւանական անկարողութիւնը յարգելու իր միջազգային ֆինանսական թէ այլ յանձնարարութիւնները:

Ամէն պարագայի, յատկանշական է որ, հսկառակ պիտոճէի վիթխարի բացերուն, մեծ երկիրներու տնտեսութիւնը շարունակած է աճիլ վերջին տարիներուն ալ, թէև շատ տնտեսագէտներու կարծիքն այն է, որ պետական պիտոճէներու բացին այս արագ աճումը մօտիկ ապագային կրնայ եղերական հետևանքներ ունենալ:

1930-ական թուականներու տնտեսական ուժատումէն (depression) ետք, ԱՄՆ-ը փարեցաւ նոր մօտեցումի մը՝ իր դժուարութիւններուն լուծումին համար. Քէյնզ-եան (Keyns) տնտեսական տեսակէտն էր այդ, ըստ որում, 1930-ական թուականներու տնտեսական ուժատումի շրջաններուն, Ամերիկան սխալը գործած էր վարկերը (credit) նուազեցնելու, և շրջաբերութեան մէջ դրուած դրամին քանակը պակսեցնելու. բաներ՝ որոնք իրենց կարգին պատճառ եղած էին անգործութեան յաւելումին: Քէյնզը կը խորհէր թէ կարևորը գո՛րծ հայթայթելն էր ժողովուրդին, ի գին ամէն բանի. պետական պիտոճէին բացը և դրամաճը կրնային շարունակուիլ անարգել. պետութիւնը կը պարտէր՝ ըլլա՛յ նոր դրամ տպելով, ըլլա՛յ վարկեր բանալով, կամ անձամբ գործ ստեղծող ձեռնարկներ հաստատելով՝ նուազեցնել անգործութիւնը: Քէյնզի համար՝ ամենէն ազդու գործօճները տնտեսական բարելաւումի

ուղղութեամբ կատարուելիք աշխատանքին մէջ՝ շահարկումի ընկերութիւններն ու անհատ շահարկումներն էին, ու մա՛նաւանդ պետութիւնն էր: Պետութիւնը կը պարտէր թէ՛ քաջալերել անհատական շահարկումի ձեռնարկները, և թէ՛ իր կողմէ հովանաւորուած և ֆինանսաւորուած գործարքներով և աշխատանքի հայթայթման ծրագիրներով հետամտիլ անգործութեան թեթևացումին և կասեցումին...:

Եւ իրականութիւն է որ բացի 1930-ական թուականներու տնտեսական տագնապէն՝ գրեթէ բոլոր արևմտեան երկիրներն ալ չեն ունեցած տնտեսական ընկրկումի (recession) երկար և խիստ շրջաններ: Պահանջքն ու մատուցումը (demand-supply) աճած են մօտաւորապէս նոյն համեմատութեամբ՝ գրեթէ բոլոր դրամատիրական երկիրներուն մէջ՝ **ինքնաբերաբար**, կամ կառավարութիւններու նախաձեռնութիւններուն շնորհիւ:

1930-ական թուականներուն ի յայտ եկող տնտեսական ուժատու մի (depression) շրջանին, ԱՄՆ-ը և նոյնախոհ արևմտեան պետութիւնները միշտ ի մտի ունեցան Քէյնզի տնտեսական տեսակէտները: Բայց հետևանքը այդ արևմտեան երկիրներուն համար եղաւ ա՛յն, որ անոնք որքա՛ն աւելի դրամ տպեցին՝ այնքա՛ն աւելի կորսնցուցին իրենց միջազգային վարկը, երաշխաւորութեան համար հետզհետէ աւելի՛ յենեցան ԱՄՆ-ի վրայ, ծանր փոխառութիւններ ըրին անկէ, և անխուսափելիօրէն հետզհետէ աւելի՛ կախեալ դարձան իրենց պարտապահանջէն՝ որ իրենց զօրավիզ կանգնող նո՛յն Ամերիկան էր...: Բացայայտ էր որ լուծել կարենալու համար իրենց տնտեսական հարցերը՝ արևմտեան պետութիւնները, ինչպէս նաև բոլոր պետութիւնները, պէտք ունէին իրարու, և ո՛վ որ ամէնէն զօրեղն էր ֆինանսապէս՝ միւսներուն օգնելով պիտի հասներ գերակայ դիրքերու:

## **Ե.- Միջազգային ֆինանս**

### **ա.- Թոյոթա-ն**

Միջազգային առևտորի և գիտական փոխանակութիւններու զարգացումին որպէս հետևանք, մա՛նաւանդ քսաներորդ դարու վերջին քառորդին, ժողովուրդներու միջև հաստատուած է տնտեսական փոխ-չարաբերութեան ցանց մը ամբողջ:

Այս կապակցութեամբ շահեկան է ամփոփումը յօդուածի մը, որ լոյս տեսած է «Պիզնէս Ռիք»ի մէջ «Թոյոթա դրամատունը ի՛նչ կ'ընէ իր պիլիոններով» վերնագրով:

Յօդուածը կը նկարագրէ երկու տարբեր մօտեցումներ դրամի յանձանձումի, և ցոյց կու տայ դրամ կուտակելու կարելիութեան

կարգ մը ձևերը.-

«... Հիմնական տարբերություններ կան շատ ամերիկեան և ճարտնական ճարտարարուեստական մեծ ընկերություններու մօտեցումին միջև՝ դրամի գործածութեան նկատմամբ:

Երբ Ամերիկայի ելևմտագէտ գործավարները կը խօսին «կանխիկ դրամի պահպանողական յանձանձումին (conservative cash management)» մասին, սովորաբար՝ պետական գանձարանի արժենիշներ (treasury bills) գնելու, և իրենց դրամը գեր-ապահով դրամատուններու մէջ երաշխագիրներով գետեղելու (ultra-secure bank certificates of deposit) մասին է որ կը մտածեն:

Բայց պատկերը տարբեր է կարգ մը ճարտնական կանխիկով-հարուստ (հնչուն դրամով հարուստ-cash rich) ճարտարարուեստական ընկերություններու պարագային: Անոնց համար՝ «կանխիկի պահպանողական յանձանձում» կը նշանակէ **ձերբազատուի՛լ իրենց պարտքերէն...**:

Այս կեցումաձօքն լաւագոյն օրինակն է Թոյոթա-ն:

Հարստացած՝ Ամերիկայի շուկաներուն վրայ իր ապահոված մեծ շահոյթով, Թոյոթա-ն տէր է ներկայիս 15 պիլիոն տոլարի արժողութեամբ կանխիկ դրամի և վաճառելի (շուկայադրելի-marketable) ապահովագիրներու (securities):

«Կը սիրենք անկախ ըլլալ», կ'ըսէ Ծենթարօ Յունին, Թոյոթա-ի ելևմուտի բաժանմունքին գործադիր փոխ-նախագահը: «Անկախութիւն» բացատրութեամբ ան կը հասկնայ՝ անկախութիւն թէ՛ Ծաբոնի զօրեղ դրամատուններէն, և թէ՛ տնտեսական ելևէջներէն:

Այս մտասնեռումը (obsession) Թոյոթա-ն վերածած է աշխարհի ֆինանսականօրէն ամէնէն պահպանողական ընկերություններէն մէկուն՝ կողմնակից զգուշանալու ամէ՛ն շահարկումէ՛ որմէ «շահամէտ արկածախնդրութեան» (speculation) հոտ կու գայ: Ու զարմանալի չէ որ Թոյոթա-ին ստացած եկամտային շահը իր հսկայական հարստութենէն, համեմատաբար շատ ցած ըլլալ Ամերիկայի մէջ ընդունելի սակէն:

Թոյոթա-ն պարտի լուծել կարգ մը հարցեր, որոնք անխուսափելի հետևանքն են իր որդեգրած պահպանողականութեան՝ ֆինանսի մէջ:

Արդիական գործարաններով, որոնք արդէն կը բանին շոգե-պինդ, հետզհետէ աւելի դժուար է Թոյոթա-ի համար յաւելեալ գումարներ կապել իր Ծաբոնի գործատեղիներուն: Ու թէև դժկամութեամբ՝ Թոյոթա-ն սկսած է դրամ շահարկելու այլ երկիրներու մէջ ալ՝ իր շահարկումները Ծաբոնի՛ մէջ ևս աւելցնելու ճիգերուն զուգընթաց:

**բ.- ԾԷՋՐԱԿ ՌՈՒՆԱՅՎՈՒՄ**

Ստորև՝ յապառում-ամփոփումը յօդուածի մը, որ լոյս տեսած է «Պիզնէս-Ուիք»ի մէջ, ու կը ներկայացնէ ԾԷՋՐԱԿ ՌՈՒՆԱՅՎՈՒՄի ֆինանսային գործելակերպն ու իրագործած յաջողութիւնները:--

Ռոնալտ Կարա-Ֆինանսական հաստատութիւնը հիմնուած է 18-րդ դարուն, Մայրը Ամսչել Ռոնալտի (Mayer Amschel Rothschild) կողմէ:

Այսօր ընտանիքին ամէնէն աչքառու դէմքերէն մէկն է ԾԷՋՐԱԿ ՌՈՒՆԱՅՎՈՒՄը, հինգերորդ սորտի թողը գերդաստանին ստասպելական հիմնադիրին՝ Մայրը Ռոնալտի:

Charterhouse Jacob Rotschild, PLC-ն՝ ԾԷՋՐԱԿի ֆինանսական-առևտրական հաստատութիւնը, Լոնտոնի շահարկումի դրամատուններուն (investment banks) ամէնէն խոշոր խմբակցութիւնն է: Անոր յաճախորդներն են Եւրոպայի գեր-հարուստները, որոնց դրամը կը շահարկէ ան Ամերիկայի մէջ՝ խիզախ գործարքներու (transaction) միջոցով: Վտանգումներու ճանապարհով է որ կը բարգաւաճի ան անսովոր արագութեամբ...:

Հիմա որ Անգլիոյ Դրամատունը թևակոխած է ֆինանսական ապա-սեղմումներու (deregulation) շրջանէ մը ներս՝ շուկայական փոփոխում ուժերը սկսած են փոխարինելու կառավարական հեղձուցիչ կանոնները: Ծահաթողութիւն առևտրին հաստատուն (fixed) յանձնարարողչէքը (commission) պիտի ջնջուի՝ Լոնտոնի սակարանը բանալով մրցակցութեան նոր կարելիութիւններու առջև: Եւ այս կացութենէն ամէնէն արագ օգտուողը պիտի ըլլայ Charterhouse J. Rothschild, OLC-ն, որուն դրամարկումի (capitalization) կարողութիւնը ամէնէն բարձրն է:

Պարզապէս «խորհրդատուութիւն» ընել յաճախորդներուն, առևտրական միջնորդի դեր խաղալ, կամ՝ ամսավճար ստանալ կատարուած աշխատանքի մը փոխան՝ ԾԷՋՐԱԿին համար ընդունելի կերպեր չեն դրամ շահելու՝ որովհետև պահպանողական են և հնաձև...: Դրամագլուխին վտանգո՛ւմն է բուն միջոցը շահային շարժում յառաջացնելու (the action was in risking capital): Ահա՛ թէ ինչո՞ր իր առաջին գործերէն մէկն եղաւ ստեղծել իր ընկերութեան մէջ ֆինանսական բաժանմունք մը, և հետամտիլ միաձուլումներու (միարկումներու-merger) և ստացքներ (acquisition) ապահովելու:

Քանի որ ամերիկեան հաստատութիւնները ամէնէն աւելի օգտուողներն էին նոր ազատութիւններէն՝ ԾՅԷՋՐԱԿը որոշեց «կամուրջ» մը հաստատել Նիւ Եորքի և Լոնտոնի միջև՝ գնելով, կամ գլխաւոր բաժնետէրերէն մէկը դառնալով ամերիկեան կարևոր ընկերութեան մը: Բայց նախ պէտք ունէր յաւելեալ դրամագլուխի: 1982-ին՝ շրջուած միարկումով մը (reverse merger) անգլիական հաստատութեան մը հետ՝ իր դրամագլուխին վրայ աւելցուց 132 միլիոն

սթերիլիզի «հոսում» (liquid) հարստություն մը: Հիմա պատրաստ էր..., և 1983-ին գնեց ամերիկեան զօրաորագոյն հիմնարկութեան մը բաժնետիրութեան հարիւրին յիսունը, և ապա-սեղմամներու ստեղծած ազատ պայմաններուն տակ՝ անգլիացի շահարկուներու (investor) առջև բացաւ կարելիութիւնը՝ աշխարհի երաշխաթողութեան մեծագոյն գործառնութիւններուն մասնակցելու:

Հիմա Ճէյքըյ Ռոսչայլտի մասին բերուած ծանօթութիւններէն քաղենք կարգ մը կարևոր կէտեր՝ յարաբերաբար հայկական իրականութեան.-

- Ֆինանսական գերակայութեան հասած խմբակցութիւններն ու տոհմերն են յաճախ ողնասիւնը ժողովուրդի մը տնտեսական ու նաև քաղաքական ուժին, ու պատմականօրէն աշքառու դեր կը խաղան բոլոր մարզերուն մէջ: Չափազանց յատկանշական է 1875-ին Ռոսչայլտի մը փոխառութեան մը շնորհիւ մէ՛կ օրուան մէջ չորս միլիոն սթերլին գոյացնելը՝ օգնելու համար անգլիական կառավարութեան, որ ան Սուէզը իլէ ֆրանսացիներէն: Իսկ հակառակ հայ անհատներու գրաւած քաղաքական բարձր դիրքին Եգիպտոսի մէջ՝ հայերու կողմէ բերուած մասնակցութիւնը Սուէզի ջրանցքին նման վիթխարի ծրագրի մը՝ մի քանի՛ տասնեակ տարօնցի բեռնակի՛ր էր միայն...

- Յատկանշական է նաև այն պարագան, որ իր անձնական շահը հետապնդելով մէկտեղ՝ Ճէյքըյ Ռոսչայլտին գլխաւոր ձգտումներէն մէկն է Լոնտոնը պաշտպանել ընդդէմ ամերիկեան ու ճաբոնական դրամագլուխներուն թափանցումին:

Որքա՛ն անելի օգտակար պիտի ըլլար՝ եթէ մեր երիտասարդները որպէս օրինակ առնէին Ռոսչայլտ մը, և ո՛չ թէ Գալուստ Կիլպենկեանը...

Այս կէտը առաջնակարգ նշանակութիւն ունի մանաւանդ մեր՝ ամերիկահայերուս պարագային: Սփիւռքը աշքի կը զարնէ իր հարուստներով, և հարստութիւն դիզած ընտանիքներով, բայց անոնցմէ ո՛չ մէկը ջանացած է ազգային կեդրոնական նպատակի մը շուրջ մէկտեղել ուրի՛շ հայ հարուստներ, և հարուստ ընտանիքներ:

Ֆինանսը ունի եզակի առաւելութիւն մը ևս, որ զայն կը դարձնէ փոքր ժողովուրդներու և հաւաքականութիւններու գլխաւոր յոյսերէն մէկը, թերևս ամէնէն շօշափելին և իրականը: Ատիկա ֆինանսին այն հանգամանքն է, որ փոքր ժողովուրդ մը (կամ համայնք մը) կրնայ իր շարքերուն մէջ ունենալ հսկայ հարստութեան տէր անհատներ, ընտանիքներ, կազմակերպութիւններ, և անոնց խմբական ֆինանսային ուժը գործածել որպէս լծակ՝ միջազգային հրապարակին վրայ տեղ բանալու համար իր ծրագիրներուն:

Անուրանալի իրականութիւն է որ հայ հարուստներ անցեալին խաղացած են նկատառելի դեր մեր քաղաքական կեանքին մէջ:

Նոր ժամանակներու մէջ, սակայն, մեր հարուստները, դժբախտաբար, հայ ըլլալէ առաջ՝ ունեորներ են. ու եթէ անցեալին կուսակցական-մտաւորական մեր ղեկավարները որոշ ճանապարհ կը թելադրէին անոնց հետաքրքրութիւններուն, և որոշ մղում կու տային անոնց դրամին՝ այսօր մեր աղաներն ու բարերարները ձերբազատած են իրենք-զիրենք այդ ազդեցութիւններէն: Այսօր մեր կուսակցական-մտաւորական ղեկավարները յաճախ իրենք դարձած են հետևորդները հարուստներուն:

Ու հիմա ընենք հարցո՛ւմը, - Ո՛ր եւն հայ Ռոսշայլտ-ները Պարսկաստանի, Հնդկաստանի, Թուրքիոյ, Եգիպտոսի, Ֆրանսայի, Անգլիոյ, Լիբանանի, և... Ամերիկայ՝...: Ո՛ր եւն Մանթաշէֆները և միւս միլիոնատէր հայերը: Ի՞նչ համազգային տարողութիւն ունեցաւ Կիւլպէնկեանի վիթխարի հարստութիւնը..., ո՛ր եւն անոր հայ ժառանգորդները ճակատագրական այս օրերուն մանաւանդ...: Ու եթէ այսօր հրապարակին վրայ կան կարգ մը մեծահարուստ հայեր՝ որքանո՞վ հայկական է անոնց ստեղծած ֆինանսական ուժը: Բարերարութիւն ընելն ու հո՛ւ ու հո՛ն դրամ բաշխելը անձ մը չէ՛ն կրնար բարձրացնել ղեկավարի աստիճանին, և հարստութիւն մը՝ ազգային գանձի մակարդակին:

Ծիշոյ է թէ յարաբերաբար հայ իրականութեան պահանջներուն՝ հայ միտքը չէ ուզած զարգանալ ազգային ֆինանսի դրութեան մը մասին մտածելու և գործելու գիտակցութեամբ:

Ո՛չ խնայողութեան ժողովրդական սնտուկներ կան միջազգային չափանիշով, ո՛չ դրամատուններ կան, ո՛չ թոշակի ֆոնտեր, և ո՛չ ալ ապահովագրական ընկերութիւններ:

Արևմտեան աշխարհին մէջ ժողովուրդներու ապահովութիւն ընծայող հսկայական աւանդներ (trusts) կան այդ մարզերուն մէջ, բայց մեր պարագային, դժբախտաբար, ո՛չ միայն չկան անոնք, այլ և մեզի կը պակսի տարրական ըմբռնողութիւնն անգամ:

Եթէ մեր կրթական դրութիւնը կարենանք բերել մակարդակի մը, ուր ենթական ո՛չ միայն այբուբեն սորվի, այլ և ունենայ հայեցի ամբողջական դաստիարակութիւն, ո՛չ միայն անցեալի պատմական էջերը սերտէ, այլ և պատրաստուի ապագան կերտելու, համոզուած ենք որ ազգային և միջազգային մեր կեցածքին մէջ շատ բան կրնանք բարեփոխել սերունդ մը ետք:

Առնենք, կցուած տախտակը: Կրնա՞ք պատկերացնել թէ հայ ընտանիք մը համապատասխան դաստիարակութեամբ գումարային փոքր գերդրամներ կատարելու պարագային ինչպիսի՞ անհատական և ազգային գանձերու կրնայ տիրանալ: Տոլարը փոխարինեցէք հայկական դրամով, և արդիւնքը նո՛յնը պիտի ըլլայ:

**ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՏԱՍԸ ՏՈԿՈՍ ԿՈՒՏԱԿԵԼՈՒ ՈՒԺԸ**

տարիք	Ա.		Բ.	
	տարեկան ներդրում	տարեվերջի արժեք	տարեկան ներդրում	տարեվերջի արժեք
19	\$2,000	\$2,200	\$0	\$0
20	2,000	4,620	0	0
21	2,000	7,282	0	0
22	2,000	10,210	0	0
23	2,000	13,431	0	0
24	2,000	16,947	0	0
25	2,000	20,872	0	0
26	2,000	25,159	0	0
27	0	27,675	2,000	2,200
28	0	30,442	2,000	4,620
29	0	33,442	2,000	7,282
30	0	36,835	2,000	10,210
31	0	40,519	2,000	13,431
32	0	44,571	2,000	16,974
33	0	49,028	2,000	20,872
34	0	53,931	2,000	25,159
35	0	59,324	2,000	29,875
36	0	65,256	2,000	35,062
37	0	71,782	2,000	40,769
38	0	78,960	2,000	47,045
39	0	86,856	2,000	53,950
40	0	95,541	2,000	61,545
41	0	105,095	2,000	69,899
42	0	115,605	2,000	79,089
43	0	127,165	2,000	89,198
44	0	139,882	2,000	100,318
45	0	153,870	2,000	112,550
46	0	169,257	2,000	126,005
47	0	186,183	2,000	140,805
48	0	204,801	2,000	157,086
49	0	225,281	2,000	174,995
50	0	247,809	2,000	194,694
51	0	272,590	2,000	216,364
52	0	299,849	2,000	240,200
53	0	329,834	2,000	266,420
54	0	362,818	2,000	295,262
55	0	399,100	2,000	326,988
56	0	439,010	2,000	361,887
57	0	482,910	2,000	400,276
58	0	531,202	2,000	442,503
59	0	584,322	2,000	488,953
60	0	642,754	2,000	540,049
61	0	707,029	2,000	596,254
62	0	777,732	2,000	658,079
63	0	855,505	2,000	726,087
64	0	941,056	2,000	800,896
65	0	<u>1,035,161</u>	2,000	<u>883,185</u>
Նտազ ներդրումը՝		16,00		78,000
		<u>1,019,161</u>		<u>805,185</u>
Դրաման՝		64 անգամ		10 անգամ

Նկատառելի է տարբերությունը առաջին և երկրորդ սիմակին միջև:

Կրկի՛ն կու գանք Ազգային Կրթական Ծրագրի կարևորություն: **Քսանմէկերորդ դարուն, այլևս այբուբենին հետ նման թուաբանական տախտակներ պարտինք սորվեցնել՝ եթէ կ'ուզենք ամբողջական հայեցի կրթություն ջամբել մեր նորահաս սերունդին:**

#### **գ.- ԱՄՆ-ի ֆինանսական ուժը**

Վերջին քառասուն տարիներուն երկու գլխատր իրադարձություններ ԱՄՆ-ը դուրս բերին իր ինքնաբա և ինքնագոհ վիճակէն ու վերածեցին այն պատկառելի ուժին, որ է այսօր:

Առաջինը՝ 1940-ին հիթլերական պատերազմն էր, որ մղեց ԱՄՆ-ը իր արդիւնաբերությունն ու տնտեսությունը զարգացնելու աննախընթաց թափով, ու չնախատեսուած բարձրութեան հասցնելու մանաւանդ իր ծանր ճարտարարուեստը:

Երկրորդ իրադարձությունը՝ 1974-ի Օփեք-ի քարիղին վրայ դրած վաճառումի արգելքն էր (embargo), որ վերցուց հակակշիռը քարիղի գինին վրայէն՝ պատճառ ըլլալով այդ գինին ազատ յաւելումին, և խախտեց ոսկիին հաստատեալ արժէքը:

Քարիղին հետ անհամեմատօրէն սղած էին նաև բոլոր արտադրությունները, ու հիմա ճարտարարուեստական երկիրները դժուարությունը ունէին զանոնք ծախելու ազգային ու միջազգային շուկաներու վրայ. և այս՝ յստաջ բերած էր անգործություն, դրամի անբաւարարություն՝ անհրաժեշտ քարիղը գնելու, տնտեսական ընդհանուր խախտում:

Աւելի՛ն,- այս երկիրներուն կառավարությունները՝ տիրող ֆինանսական համաշխարհային անբաղձալի կացութեան հակազդելու միջոցներէն զուրկ ըլլալով՝ մղուեցան քննադատութեան թիրախ դարձնելու իրենց երկիրներուն դրամատէրներն ու դրամատունները, որոնք իրենք-զիրենք զգալով անապահով՝ իրենց դրամին համար փնտռեցին ապահով կայքեր, և անշուշտ ԱՄՆ-ն էր ամէնէն ապահովը:

Ու բնականաբար, ԱՄՆ-ը, իր սովորական գործնականութեամբ ու արագաշարժութեամբ, օգտուեցաւ առիթներէն և քառասուն տարուան մէջ գրաւեց «Աշխարհի Ֆինանսի Դրամատուն»ի դիրքը:

Այսօր աշխարհի ոսկին պահ դրուած է Նիւ Եորքի դրամատուններուն մէջ: Օրինակ՝ հո՛ն է պաշարը այն ոսկիին, որ արաբները կը ստանան իրենց քարիղին վաճառքէն: Բայց յատկանշականը ա՛յն է, որ իր «ապահով» ըլլալու առաւելութեան կարգին, ոսկին ունի անպատեհություն մը,- ո՛չ տոկոս կը բերէ և ո՛չ ալ կարելի է զայն փոխանակել՝ առանց հազուագիտ դրամանիշի վերածելու:

Հետևաբար, արաբները իրենց ոսկիին երաշխադրումով (guarantee)՝ դրամական փոխառություններ կ'ընեն Նիւ Եորքէն. և կը պատահի ա՛յն, որ Ամերիկան թե՛ որոշ սակ մը կը ստանայ ոսկին պահելու համար, և թե՛ տոկոս՝ իր փոխ տուած դրամին համար:

Արդ, բացառապէս է որ ամենագոր դրամ-ֆինանսն իսկ այլևս անփոփոխ ու կայուն արժէք մը չէ: Աշխարհի տնտեսութիւնը վերածուած է իրերահաղորդ ամաններու սարքի մը, ուր համաշխարհային տարողութիւն ունեցող ասպրանքի մը գինը կ'ազդէ բոլոր երկիրներուն տնտեսութեան վրայ՝ հազուագիտ դրամանիշներու (devise) սակագինը փոխելով ըստ օրուան պահանջներուն:

Վերջին «զէնքը»՝ ծփուն սակագիններու (floating rates) դրութիւնը, որ ԱՄՆ-ը ստեղծեց ու պարտադրեց աշխարհի շուկային, շատ ազդու միջոց մըն է, բայց նաև շատ վտանգաւոր՝ որպէս զէնք:

Ծփուն սակագիններու դրութիւնը պիտի չնկատէինք այնքան վտանգաւոր՝ եթէ ԱՄՆ-ը չըլլար միա՛կ «Աշխարհի ֆինանսական դրամատունը», և ամէն երկիր իրեն պարտական չըլլա՛ր...: Այսօր ԱՄՆ-ի պահանջած (նշանակած) տոկոսի սակը աշխարհի վերև կախուած դամոկլեան սուրն է:

Իր այս զօրեղ ու գերակայ դիրքին հասնելու համար ԱՄՆ-ը դիմած է երկու գլխաւոր միջոցներու.

ա.- Ապառիկով աշխատիլ անհատապէս.

բ.- Յանձնառու ըլլալ պետական խոշոր պարտքերու:

Մինչ ամբողջ աշխարհ դարերէ ի վեր պարտքին ԴԷՄ մտածելու վարժեցուցած էր իր գործի-մարդիկը, ԱՄՆ-ը ասպառիկով գործելը և «վաղուան ընելիքը այսօ՛ր ընելը» կեանքի իմաստութեան վերածեց: Ապա՛ այս կերպով հարստացած իր տեղական հաստատութիւններէն ու քաղաքացիներէն փոխառություններ ընելով՝ իր կարգին բոլոր դրամի պէտք ունեցող պետութիւններուն պարտքի դրամ տուաւ, և տոկոսի միջոցով իր թաթը դրաւ աշխարհի ելևմտիկ ու տնտեսութեան վրայ:

Հոս, իր շահեկանութեան համար, տանք ամփոփումը յօդուածի մը, լոյս տեսած է «Պիզնէս Ուիք»ի մէջ՝ Նիւ Եորքի մասին. վերնագիրն է՝ «Նիւ Եորք՝ աշխարհի դրամագլուխի մայրաքաղաքը».

«... Դեռ միայն տասնհինգ տարի առաջ սնանկութեան դուռը հասած Նիւ Եորքը այսօր ծնուցիչն է աշխարհի դրամագլուխի կէսին:

Այն կեդրո՛նն է ան, ուրկէ կը տարածուի նրբակերտ ցանցը հեռահաղորդումներու (the hub of a sophisticated network of telecommunications) և կը ծածկէ աշխարհը:

Լրամիջոցներու (media) անվիճելի առաջնորդն է ան աշխարհի: Աշխարհի ֆինանսական հսկան է:

Նպաստաւորուողն է (beneficiary) ան՝ արդի ժամանակներու

ֆինանսական ուժի խոշորագույն տեղափոխումներէն (shifts of financial powers):

Անշուշտ Նիւ Եորքը ունի իր ներքին բազմաթիւ դժուարութիւններն ու բարդութիւնները, որոնք պէտք է յաղթահարուին, եթէ ան պիտի շարունակէ ըլլալ աշխարհի ֆինանսական հսկան: Ու բնականաբար կայ նաև այն «պատերազմը», որ Եւրոպան պիտի մղէ Նիւ Եորքի դէմ՝ անկէ վերախլելու համար իր նախկին դիրքը...: Իսկ ճաբոնական ազդեցութիւնը ինքզինք սկսած է զգալի ընել ֆինանսի համաշխարհային հորիզոնին վրայ»:

## **Զ.- Աշխարհի ֆինանսային հարցերը**

### **ա.- Ընդհանուր ակնարկ**

... Ինչպէս քննադատները նախատեսած էին՝ ամերիկեան դրամական յաւելում յատկացումները Միջազգային Հիմնադրամ-ին հաշուոյն՝ չյաջողեցան լուծել աշխարհի պարտքի տագնապը. իսկ Միջազգային Հիմնադրամ-ին միջամտութիւնը պարտառու (debtor) երկիրներու և պարտատու (creditor) դրամատուներու միջև կայացող կարգադրութիւններուն ատեն՝ Փանտորայի Տուփ մը բացաւ: 1982-ի ամրան յստակ դարձաւ որ տնտեսական ընկրկումին (recession) հետևանքով Մէքսիքան ի վիճակի պիտի չըլլար իր ութսուն պիլիոն տոլարի արտաքին պարտքին տակէն դուրս գալու. (պարտքին խոշոր մէկ մասը պարտական էր ան Նիւ Եորքի մեծ դրամատուներուն). վճարումի թերացման (default) ուրուականն ու դրամատունային խուճապի և ֆինանսական տագնապի վախը շուով գլուխ ցցեցին:

Միջազգային Հիմնադրամը իր նորաստաց դրամական միջոցները գործածեց նոր փոխատուութիւններ ընելու՝ արդէն պարտական երկիրներուն, որպէսզի անոնք կարենան վճարել իրենց հին պարտքերը: Անմիջական հետևանքը եղաւ այն, որ պարտական երկիրները նոր պարտքերը դիզեցին հիներուն վրայ՝ վատթարացնելով կացութիւնը փոխատու դրամատուներուն:

Միջազգային Հիմնադրամ-ին բերել ուզած լուծումը աշխարհի պարտքի տագնապին՝ շուտով բաղխեցաւ քաղաքական իրականութեան: Անոր ստեղծելիք պայմանները խստակեցութիւն (austerity) կը պարտադրէին պարտառու (աղքատ) երկիրներուն՝ որպէսզի անոնք կարենան բազմամիլիոն տոլարի արժողութեամբ տոկոս վճարել Նիւ Եորքի «հարուստ» դրամատուներուն: Եւ այս բանին անխուսափելի հետևանքը եղաւ այն, որ պարտառուները չուզէն վճարել իրենց պարտքերը՝ ըստ ստորագրուած համաձայնութիւններուն, և պահանջէն տոկոսի սակերուն վերաքննութիւնը:

Աշխարհի ֆինանսական իրականութեան ամէնէն յատկանշա-

կան երևոյթներէն մէկն այն է, որ ԱՄՆ-ի միջազգային շարժումներն ու ձեռնարկները հակակշռող ուժ գոյութիւն չունի ներկայիս: Անշուշտ ճաբոնը լուրջ մրցակից մըն է, բայց ա՛յդքան միայն հիմնակոհիմա:

#### **բ.- Ֆինանսային գործավարները (Managers)**

Որպէս ֆինանսային գործօններ, կան տակաւին ազգային ու միջազգային գործավարները (managers), որոնց ազդեցութիւնը հետզհետէ աւելի զգալի է ելևմտի բոլոր երևոյթներուն մէջ: Ազատ շուկայի պայմաններուն տակ՝ այդ գործավարները մօտէն կը մասնակցին երկիրներու ելևմտային կեանքին, ազգային գործավարները՝ հետամուտ անհատական-անձնական (private) դրամագլուխներու շահարկումին, միջազգայինները՝ հանրային դրամագլուխին:

Խորհրդային Միութեան մէջ ո՛չ ազգային, և ո՛չ ալ միջազգային դրամային գործավարներ գոյութիւն ունէին. ու թէ «կայի՛ն» իսկ՝ անոնց աշխատանքը սաղմնային վիճակի մէջ էր: Այսուհանդերձ, պէտք է նշել որ դրամ տպելով, ու ԲԱՑ-ով (deficit) տնտեսութիւն վարելու կերպը, թէև արդէն իսկ կիրարկուած անցեալին, Ամերիկան «սորվեցաւ» Խորհրդային Միութեանէն: Բայց արդիւնքը եղաւ այն, որ ԱՄՆ-ը այդ գործելակերպը վերածեց շահի և տիրակալութեան միջոցի մը, մինչ Խորհրդային Միութիւնը տնտեսվարութեան այդ կերպին պատճառով ենթարկուեցաւ վնասներու, և տկարացաւ միջազգային ֆինանսի մարզին մէջ:

Խորհրդային Միութեան ատերակներուն մէջէն ծնաւ մեր նոր Հայաստանի Հանրապետութիւնը 21 Սեպտեմբեր 1991-ին, և ըստ Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական Դրամատան նախագահ Բ. Ասատրեանին՝ այդ թուականին ազգային գանձը ուներ միայն 150,000 ամերիկեան տոլարի պահեստ մը:

Պատմութիւնը ծանօթ է բոլորիս. բայց այս պահուն մեզ հետաքրքրողն է ֆինանսը: Անկախութեան հռչակումէն ի վեր փոխուած է շատ բան. պահեստի գումարը վեր է 150 միլիոն տոլարէն. Հայաստանի դրամը յարաբերաբար կայուն է ԱՄՆ-ի տոլարին դէմ. բայց ահռելի է պետական բացը, որ կը մօտենայ մէկ միլիար տոլարի սահմանին:

Հայաստանի Հանրապետութիւնը սպառողի իր վիճակէն դուրս գալու բացայայտ դժուարութեան է մատնուած:

#### **գ.- Ֆինանսային ծառայութիւններ**

Վերջին տասնամեակներուն, բազմաթիւ ճարտարարուեստական-վաճառականական ընկերութիւններ՝ թէ՛ նոր եռուզեռ յառաջացնելու համար, և թէ՛ նոր շահեր ապահովելու ակնկալութեամբ, նետուեցան ֆինանսական ծառայութիւններու մարզին մէջ:

Մարզ մը՝ որ խորքին մէջ բարդ, մանուածապատ ու վտանգալից է: Գլխաւոր շարժառիթը այս մեծցող շահագրգռութեան այն էր, որ վերջին տասնամեակի տնտեսական անկայունութիւնը պատճառ եղած էր որ ահագին գումարներ դուրս հանուին իրենց աւանդական նուազ շահաբեր պահեստատեղերէն, և շուկաներ փնտրուին աւելի՛ հասութաբեր շահարկումներու համար:

**դ.- Փոքր դրամատուններ**

Այն ընդհանուր կարծիքը՝ թէ ժամանակի ընթացքին դրամատիրական երկիրներու մէջ խոշոր ձեռնարկութիւնները պիտի խեղդեն կամ կլլեն բոլոր փոքրերը, պարզուեցաւ որ չափով մը միայն ճիշդ էր: Արդարև, արևմտականացումի ալիքը այնքա՛ն վիթխարի էր, և իր ազդեցութիւնը այնքա՛ն հեռահաս, որ աշխարհի շուկաները ընդարձակուած են աներևակայելիօրէն, և գործունէութեան դաշտ կայ նաև փո՛քր հաստատութիւններուն համար: Աւելի՛ն, խոշոր ձեռնարկութիւնները շատ պարագաներու աւելի՛ շահաբեր կը նկատեն իրենց արտադրութիւններուն հետ կապ ունեցող որոշ ապրանքանիւթեր (օրինակ՝ մեքենայի մասեր) գնել փոքր ընկեթութիւններէն՝ քան զանոնք արտադրել անձամբ:

Մոլեցա՛նք վերոյիշեալ խորհրդածութիւններուն՝ մտածելով ստեղծուելիք հայկական համազգային այն շահակցական ձեռնարկութեան մասին, որուն կարիքը անչետաձգելի անհրաժեշտութիւն մը դարձած է այլևս: Մեր հաստատ համոզումն է որ ԿԱՐԵԼԻ՛ Է ՍՏԵՂԾԵԼ ՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ շատ մարզերու մէջ,– առևտրական, ֆինանսային, և այլն:

### III- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆԵՐՍ

#### Ա.- Մուտք

Մեր ուսումնասիրության գլխաւոր նպատակներէն մէկն է պարզել փորձել ֆինանսական արդի ըմբռնումը, որպէսզի այդ ըմբռնումին լոյսին տակ կարենանք ձևադրել ու խմբագրել Ընդհանուր Ֆինանսական Ծրագիր մը՝ ի նպաստ մեր տոհմային և ազգային ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՐՈՑ-ներուն կառուցումին:

Ստեփան Զօրեանը այնքան իրաւացիօրէն ըսած է. «Հայերը բերդեր ունին, բայց ո՞ր է Հայոց Բերդը...»:

Ինչպէս միւս բոլոր մարզերուն մէջ՝ տխուր է մեր ազգային կացութիւնը ֆինանսի տեսակէտէն ալ:

Ծի՛շո՛ է, հարուստներ շա՛տ ունինք, նոյնիսկ մեծահարուստներ, բայց որպէս ազգ՝ ԱՂՔԱՏ ենք: Արդարև, ո՞ր է մեր ազգային հարստութիւնը..., հարստութիւն մը՝ որ գոյացուցած ըլլանք ազգին կարիքները հոգալու համար..., որ գոյացուցած ըլլանք ԱԶԳՈՎԻՆ: Չկա՛յ պարզապէս...: Ու երևակայե՛լ որ այժմ, երբ աշխարհ հասած է աստիճանի մը՝ ուր կը տիրապետեն «քրետիթ-քարտը», «առանց կանխիկ դրամի ձեռնարկումները», «մագնիսական երիզի վրայ արձանագրուած էլեքդրոնիք դրամի դրութիւնը»..., երբ՝ մարդկութիւնը կ'ապրի «դրամաճի և դրամային վերաթմրումի (inflation-deflation), «ծփուն սակերու» (floating rates), մանրաֆինանսի (micro-finance) և համաֆինանսի (macro-finance) դարուն մէջ, մենք՝ հայերս, որպէս ազգ, դեռ կը գտնուինք «անձրևոտ օրերո՛ւ հաշուոյն վերմակին մէջ կամ անկողինի՛ն տակ» դրամ պահելու նախնական մակարդակին վրայ:

Ու մեր հարուստներն անգամ, որոնք իրենց անձնական նախաձեռնութիւններուն և գործառնութիւններուն մէջ յաճախ օգտուած են ֆինանսի ժամանակակից կերպերէն, ընդհանրապէս դարձած են հնաձև ու վախկոտ, պահպանողական ու դանդաղ՝ երբ գլխաւորած են ազգային գանձերու յանձանձումը...: Յաճախ չե՛ն իսկ կրցած առաւելագոյն տոկոսով շահարկել ազգին դրամները:

Կարևոր կէտ մը.-- Մեծ Եղեռնին յաջորդող տարիներուն, երբ հայութեան բեկորները նետուած էին աշխարհի շորս ծագերուն՝ հայ անհատին գոյատևումին տեսակէտէն հիմնական նշանակութիւն

ուներ համայնքը: Այսօր, սակայն, տարբեր է պատկերը: Արտասահմանի մեջ հայ ըլլալը ո՛չ մեկ առաելություն կ'ապահովէ անհատին, ո՛չ մեկ ձևով կը նպաստաւորէ զայն...:

Անհատ-համայնք այս անբնական փոխ-յարաբերութեան պատճառն այն է, որ հայ համայնքը չէ կազմակերպուած, և հետևաբար ո՛չ մեկ իրական ուժ կը ներկայացնէ միջազգային հրապարակին վրայ:

Որպէսզի բարեփոխուի այս անբաղձալի կացութիւնը և անհատը կարենայ նպաստը վայելել իր անդամակցութեան՝ անհրաժեշտ է որ, ուրիշ մարզերու կարգին, համայնքը զօրանայ ֆինանսապէս մանաւանդ: Անշուշտ ըսելո՛ւ իսկ պէտք չկայ թէ այսպիսի կացութիւն մը կ'իրականացուի ժողովուրդին զանգուածային ու դրական մասնակցութեամբ:

Եթէ ունենանք որակաւոր ղեկավարութիւն՝ կրնանք նաև ունենալ ֆինանսապէս զօրաւոր համայնք մը՝ հաստատուած խումբին և անոր անդամներուն միջև գոյութիւն ունեցող փոխադարձ «շահի» յարաբերութեան վրայ: Թող ո՛չ որ խրոշի «շահ-ին» վրայ դրուած այս շեշտէն, և թող ո՛չ որ «նիւթապաշտական» ձգտում տեսնէ անոր ետին: Ծահը անպայման «շահադիտութիւն» չէ. ան պարզապէս շարժիչ ուժ մըն է, ու եթէ լաւ ու ճիշդ ղեկավարուի՝ կրնայ ծնունդ տալ անհաշիւ բարիքներու, թէ՛ անհատին համար ու թէ՛ հաւաքականութեան:

## Բ.- Ֆինանսը և մենք այսօր

Կրկնե՛ք՝ որպէս ազգ չքաւոր ենք: Օրինակ, Լիբանանի աղէտին դէմ-յանդիման մնացինք շփոթած՝ երբ անհրաժեշտ դարձաւ նիւթական օգնութիւնը, և դիմեցինք մեզի մնացած վերջին, բայց և ամէնէն նախնական միջոցին՝ հանգանակութեան: Այլ խօսքով՝ դիմեցինք ժողովուրդին ԳՈՒԹ-ին, և այդ գութն իսկ չեղաւ նկատառելի որպէս նիւթական արդիւնք: Հաւաքուած գումարները Լիբանանի մեր գաղութին ԵՐԿՈՒ ԸԱԲԹՈՒԱՆ անմիջական կարիքներուն անգամ չէին բաւեր: Ու եթէ նոյնիսկ մեր բոլո՛ր գոյութիւն ունեցող միութիւնները միացնէին իրենց տրամադրելի հնչուն հարստութիւնը՝ գումարը պիտի չկարենար որևէ հիմնական նշանակութիւն ունենալ:

Ժողովուրդ մըն ենք, որ Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ Գ.Ա.Չ չունի...:

Մեր ազգային չքաւորութիւնը ատելի ևս ակնբախ դարձաւ Հայաստանի երկրաշարժին և Ղարաբաղի ազատագրական պայքարին սանձազերծման առիթով: Մեր ժողովուրդը Սփիւռքի մեջ չունէր **Ծոսապ Կարիքի** աստեն գործածելի որևէ գումար, և անհրաժեշտ եղաւ նորէ՛ն դիմել հնագոյն ձևին՝ հանգանակութեան: Եւ անհա նորէ՛ն կոչ ուղղեցինք թէ՛ մեր, ու թէ՛ այլ ժողովուրդներու

գութին: Իսկ աելի գէ՛շը,- պարզուեցաւ որ չունէինք որևէ կազմակերպութիւն՝ համակարգելու աշխատանքները, ծրագրուած մօտեցումով դիմակալելու աղէտը: Դժբախտաբար, մման կազմակերպութեան մը գոյութիւնը զգալի չդարձաւ մասն Հայաստանի մէջ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԸ ներկայութիւնը՝ որպէս պատասխանատու և դեկավարող ուժի՝ երևան չեկաւ անմիջապէս: Ուշ մնացինք և ազգը շատ տուժեց: Տակաւին մինչև այսօր կը կրենք ասոր հետևանքները ամէն մարզի մէջ:

Մեր ազգային չքաւորութիւնը ակնբախ է և խորապէս ողբալի մաս երբ նկատի ունենանք որ ամերիկահայ դպրոցներուն աշակերտութեան թիւը կրնար ԳԷԹ եռասպատիկը ըլլալ հիմակուանին՝ ԵԹԷ ՌԻՆԵՏԱԾ ԸԼԼԱՅԻՆՔ Ա.ԶԳԱՅԻՆ ԳԱՆՋ ՄԸ, և անկէ վճարուէին աշակերտներուն թոշակները ամբողջովին՝ անհրաժեշտ պարագային, ու մասամբ՝ այլ պարագաներու:

Մեր ազգային չքաւորութիւնը ակնբախ է մաս դէմ-յանդիման միջազգային իրականութիւններուն: Որևէ ֆինանսային-տնտեսական ուժ չունինք՝ որ կարենանք նկատառութեանը արժանանալ միջազգային հոսանքներուն և քաղաքական խմբաւորումներուն:

Հիմա՝ նորէ՛ն հարցում մը, ուղղուած մեզի՝ հայերու,- Ո՛ր է Հայաստանի տեղը միջազգային ֆինանսի մարզին մէջ...: Ո՛ր «Աշխարհ-ին» կը պատկանի ան,- Երրորդի՛ն, Երկրորդի՛ն, Առաջինի՛ն...: Կա՞յ, թէ՞ չկայ Հայաստանը համաշխարհային իրականութիւններուն մէջ...:

Նոյնիսկ իր տեղական ներքին շուկային տեսակէտէն՝ Հայաստանը չէ՛ գտնուած «արդիական» մակարդակի վրայ: Չենք խօսիլ ներկայ վիճակին մասին...

Այժմ խօսինք Սփիւռքի մասին:

Սփիւռքը, կասկած չկայ, ունի բազմաթիւ կարելիութիւններ և առաւելութիւններ՝ մանաւանդ ֆինանսի տեսանկիւնէն դիտուած: Այս կապակցութեամբ՝ Սփիւռքի նոյնիսկ «տկարութիւն» կամ «անպատեհութիւն» նկատուած պարագաներէն գէթ ոմանք կրնան, եթէ ճիշդ օգտագործուին, վերածուիլ առաւելութիւններու.-

Աշխարհագրական այլազանութի՛ւն կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Ծովայի պէսպիսութի՛ւն կ՛ուզենք՝	ունինք արդէն.
«Վտանգումի» կարելիութիւններ՝ կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Հազուագիտ դրամամիշ ձեռք ձգելու պատեհութիւններ՝ կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Տրամադրելի դրամագլո՛ւխ կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Բարեկեցիկ ժողովո՛ւրդ կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Մեծ դրամատէրներ՝ կ՛ուզենք՝	ունինք արդէն.
Հաւաքական նպատակներ՝ կ՛ուզենք՝	ունինք արդէն:

Ինչ որ կը պակսի՝ այն ԻՐԱՊԷՄ ՄԵԾ ՂԵԿԱՎԱՐՆ Է, որ իր և իր հարստութեան՝ շուրջ հաւաքէ ուրիշ հարուստ հայեր ալ, և ստեղծէ ֆինանսի համահայկական կղզի մը, և կղզեխումբեր: Կասկած չկայ որ միջազգային տարողութեամբ Ազգային Դրամատունի մը հաստատումին պարագային՝ հայ ժողովուրդը առատօրէն պիտի մասնակցի անոր դրամագլուխին, եթէ վստահի՝ անոր: Ինչպէս կարելի է կասկածիլ որ, օրինակ, Պօղոս Նուպարի և Գալուստ Կիւլպենկեանի գործակցութեամբ հիմնուելիք համազգային-միջազգային դրամատուն մը վստահութիւնը չվայելէր մեր ժողովուրդին...:

Անշուշտ գտնուած են մեր ժողովուրդին ծառայող մեծահարուստներ, որոնք ունեցած են ղեկավարի անվիճելի արժանիքներ, և կատարած են նշանակելի գործեր: Այդ բացառիկներէն է Պօղոս Նուպարը, հիմնադիրը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Պօղոս Նուպարի մեծագոյն իրագործումը, անշուշտ, Հ.Բ.Ը.Մ.-ի հիմնումն էր՝ գոյացումը «ազգային դրամագլուխի» մը՝ հոգ չէ թէ միայն ժողովուրդին անմիջական կարիքներուն համար. այդ օրերուն՝ հրա՛ջք էր ու անսովո՛ր յանդգնութիւն այդքա՛նն ալ: Ու կասկած չկայ որ՝ եթէ ժամանակները ի նպաստ ընթացած ըլլային մեր ժողովուրդին՝ Պօղոս Նուպարը Բարեգործականին գանձը բազմապատկա՛ծ պիտի ըլլար շուտով, և զայն վերածած միջազգային ֆինանսական ուժի մը՝ ի սպաս Սփիւոքի մեր նպատակներուն ու դատին: Դժբախտաբար, իր յաջորդները, որոնք Հ.Բ.Ը.Մ.-ը ղեկավարեցին հետզհետէ աւելի բնականոն դարձող ժամանակներու մէջ՝ հեռատեսութիւնն ու կարողութիւնը ցոյց չտուին այդ մեծ կազմակերպութեան գանձը որպէս կորիզ գործածելով՝ անոր շուրջ կուտակելու հայ մեծատուններու հարստութիւններուն բարիքն ալ, ու զայն վերածելու միջազգային ուժի: Դժբախտաբար, նոր ղեկավարները այդ համազգային կազմակերպութեան՝ բաւարարուեցան քանի մը տասնեակ միլիոն տոլար աւելցնելով անոր դրամագլուխին վրայ...

Շատ յատկանշական երևոյթ մըն էր Լազարեան գերդաստանը, և մանաւանդ Յովհաննէս Լազարեանը: Տէ՛ր՝ վիթխարի հարըստութեան, մեծատողանդ առևտրական և իշխա՛ն ճարտարարուեստի՝ ան ունէր ղեկավարի անվիճելի յատկանիշներ, և ծառայեց մեր ժողովուրդին թէ՛ մշակութային, ու թէ՛ մանաւանդ ազատագրական ճիգերուն: Որպէս առևտրական-ճարտարարուեստագետ, և որպէս հայ առաջնորդ՝ քաջ մը առաջ էր ան իր ժամանակէն, և հակառակ որ ապրած էր 18-րդ դարու երկրորդ կէսին՝ մտածած ու գործած է ըստ կերպերու և մօտեցումներու, որոնք յատկօրէն կը յիշեցնեն քսաներորդ դարու ամէնէն յառաջադէմ մտածելաձևն ու մերձեցումը: Երանի՛ թէ մա՛նաւանդ այսօր ունենայինք Լազարեան մը:

**IV- ՍՏԵՂԾՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ» ՄԸ**

**Ա.- Մուտք**

Ասիկա մէկ մասն է ընդարձակ ու համապարփակ ծրագրի մը, որ ստեղծումն է ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ-ԾԱՐ-ՏԱՐԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԸ (ՀԱՄՈՅԹ-Ի մը):

Որպէս այդ Համոյթ-ին մէկ բաժինը՝ ՖԻՆԱՆՍԻ ԾԻԻՂԸ սերտօրէն ազուցուած պիտի ըլլայ անոր տնտեսական ու ճարտարարուեստական բաժիններուն: (Տեսնել Հայ Ազգային Վերակերտումի Առաջարկներու համապատասխան հատորները):

Ֆինանսը, թէն առանձին գիտութիւն մը, և «անջատ» մարզ մը՝ մնայուն յարաբերութեան մէջ է միւս երկու ճիւղերուն հետ:

Արդ, հիմա որ աշխարհի տնտեսական կեանքը նոր եռուզեռի մը մէջ է, Սփիւռքը՝ մէկտեղուած առաելաբար Հիւսիսային Ամերիկա՝ ինքնապաշտպանումի և ինքնանորոգումի ճիգեր կ'ընէ, Հայաստանի ընկերային կառոյցէն ներս ազատականութեան ու վերափոխումի շարժումներ կը կատարուին, և Սփիւռք-Հայաստան կապերը կրնան սերտանալ, հիմա՛, կը խորհինք, յարմարագոյն ժամանակն է ստեղծել փորձելու համահայկական այդ Համոյթ-ը:

Կարևորը ծրագրելն ու այդ ծրագիրը հետապնդելն է. հաւատա՛լն է թէ ԱՂ ԱՏԵՆՆ Է ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒ ԴԻՄԵԼՈՒ. անդրադառնա՛լն է թէ՛ եթէ չօգտագործենք այս վերջին պատեհութիւնը՝ կրնայ ՇՈՒՏՈՎ ԱՂ ԱՆԴԱՌՆԱԼԻՕՐԷՆ ՈՒԾ ԸԼԼԱՆ...:

**Բ.- Յարակից հարցեր**

Ֆինանսի մարզին մէջ ալ հիմնական նշանակութիւն ունի գործակցութիւնը Հայաստանի հետ՝ թէ՛ Սփիւռքին համար, ու թէ՛ Հայաստանին:

Պիտի չզարմանանք եթէ ազգային ֆինանսական մեծ ուժ մը ստեղծելու գաղափարը շատերուն համար ըլլայ անըմբռնելի, և իր խոշորութեամբ նոյնիսկ վախ պատճառէ:

Արդ, առաջքը առնելու համար հաւանական կասկածներուն,

վերապահություններուն ու վախերուն՝ անմիջապէս ըսենք որ աշխատանքը յառաջ պիտի տարուի ըստ նախագծուած ծրագրի մը, և քալլ առ քալլ՝ առանց հրաշային և կախարդական ուսումներու:

Որպէս մէկ հատուածը Ընդհանուր Ծրագրին՝ ֆինանսային բաժինն ալ պիտի ունենայ իր առանձին նախագիծը, որուն կիրարկումը պիտի ընթանայ միաժամանակ «երկու» ուղիներէ,- Ընդհանուր Ծրագրին նախատեսած ուղին, և ուղի՛ն, որ կը թելադրուի ֆինանսի նախագիծէն:

Ժողովուրդի մը ֆինանսային ուժը, անկախ իր կեդրոնական գանձի մը ի նպաստ իր գործի-մարդոց իրագործած նիւթական արդիւնքէն, խարսխուած է այդ նոյն ժողովուրդին անդամներուն մեծամասնութեան նիւթական վիճակին վրայ: Ժողովուրդի մը հարստութիւնը՝ իր ՀԱԻԱՔԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է, իր մասնակցութեան՝ յառաջ տարուող աշխատանքներուն, և իր անընդհատ գորավիզին՝ նիւթապէս ու բարոյապէս:


Արդ, կենսական է որ մեր ժողովուրդը հետաքրքրուած ըլլայ տնտեսական հարցերով, ծանօթութիւններ ունենայ ֆինանսին մասին, տիրանայ նիւթական բարձր մակարդակի՝ որպէսզի իր հաւաքական շահագրգռութիւնները կարելի դարձնեն ստեղծումը ֆինանսային կազմակերպութիւններու, և այդ կազմակերպութիւններուն, ու ճարտարարուեստական-առևտրական միւս ընկերութիւններուն խմբական գորացումէն ծնունդ առնէ համահայկական տնտեսական անհրաժեշտ ուժը:

Պէտք է ըսել ճշմարտութիւնը,- այսօրուան ֆինանսի մասնագիտացած համաշխարհային շուկային վրայ Հայաստանն ու Սփիւռքը անուանական ներկայութիւններ իսկ չեն որպէս մակարդակ ու տարողութիւն:

Երբ Արևմուտքի մէջ կը խօսուի «ներառք-ի» (take-over), «ներձուլում-ի» (merger), «միոյթային տուրք-ի» (unitary tax, tax on global income), «վարկագիր-ի» (letter of credit), «ծփուն սակ-ի» (floating rates), «օտար փոխանակագին-ի» (foreign exchange), «միջազգային դրամավարութեան» (international banking) և այլ բազմաթիւ ֆինանսական գործարքներու մասին՝ մինչև վերջերս Հայաստանը ՄԷԿ ՀԱՏ ԻՍԿ թելեքս չէ ունեցած՝ որ ուղղակիօրէն կապուած ըլլայ Արտասահմանի հետ:

Ներկայիս օրէ օր կը բարելաւուի կացութիւնը՝ բայց շատ դանդաղօրէն: Մինչդէռ շրջափակումը պատճառ մըն է որ շատ անելի արագ շարժինք որոշ մարզերու մէջ:

Ահաւասիկ տախտակ մը՝ ներկայացնող կառոյցը ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄՈՅԹ-ին, և անոր տեղը՝ Արմէնիզմի Ծրագրին համընդհանուր մարմնին մէջ.-



**Գ.- Հայկական Ազգային Դրամատուն մը Սփիւռքի մէջ**

Ֆինանսի բաժինին կապակցութեամբ պէտք է նշել որ միւս երկու մարզերէն՝ Առևտրականէն ու Ճարտարարուեստականէն աւելի՛ արագ իրագործելի է ան, այն իմաստով որ դրամը արդէն գոյութիւն ունի անհատներու և ընկերութիւններու մօտ, և անհրաժեշտը այդ դրամները մէկտեղելն ու շահարկելն է: Անշուշտ անչափելիօրէն կարևոր է գաղափարը ժողովուրդին ներկայացնելու կերպը:

Արդ, գոյացումէն ետք սկզբնապէս անհրաժեշտ գումարին՝ յաջորդ քայլը հիմնումն է Հայկական Ազգային Դրամատունի մը (Հայկական Ֆինանսային Ընկերութեան մը), որպէս մէկ ճիւղը Տնտեսական Համոյթին:

Հիմա քննենք այդ ծրագիրը իրագործելու աշխատանքները.-

Հետևեալ չորս կէտերը կենսական քայլերն են.-

- 1.- Ծրագրում (Planning)
  - ա.- Առաջադրանքներ (Objectives)
  - բ.- Ուղղորոշում (Orientation)
- 2.- Կազմակերպութիւն (Organization)
  - ա.- Օրինական (Legal)
  - բ.- Վարչական (Administrative)
  - գ.- Անձնակազմ (Human resources)
- 3.- Հսկողութիւն (Control)
  - ա.- Ամսօրեակական բանումին վրայ (day to day operation)
  - բ.- Հանրային գործառնութիւններուն վրայ (public transactions)
  - գ.- Իր ոչ-հանրային (սեփական) գործառնութիւններուն վրայ (private transactions)
- 4.- Դրական մթնոլորտի ստեղծում (Climate setting)
  - ա.- Հանրային փոխ-յարաբերութեան միջոցով (public relation)
  - բ.- Ճարտար շուկայադրումի միջոցով (Marketing)

Անշուշտ պէտք է գոյութիւն ունենայ Հայկական Առևտրական-արդիւնաբերական-ֆինանսային Մայր Տուն մը, և գոյութիւն ունենան Քոյր Տուներ և Մասնաճիւղեր:

Մայր Տունը նախընտրելի է որ հաստատուի «ապահով» ու ազատ հողի մը վրայ, և կարենայ բանիլ անկաշկանդ: Բայց Քոյր Տուներն ու Մասնաճիւղերը կրնան գտնուիլ որևէ տրամաբանական երկրի մէջ, և բանիլ ըստ այդ երկիրներու օրէնքներուն: Անոնց գործունէութիւնները պէտք է ուղղակիօրէն կապուին երկիրներու տեղական կեանքին: Կարևոր է որ Հայաստան՝ ալ ունենայ իր տնտեսա-ֆինանսային ներկայացուցիչները՝ առաւելագոյն թիով

երկիրներու մէջ:

Անշուշտ հայ մամուլը պիտի ունենայ աշխատանքի իր կարևոր բաժինը՝ ստեղծուելիք Հայկական Ֆինանսական Հիմնարկութեան (Հ.Ֆ.Հ.) ի նպաստ: Հայ թերթերը կը պարտին ունենալ յատուկ ֆինանսի բաժիններ, ուր պէտք է երևին թէ՛ Հ.Ֆ.Հ.-ի, և թէ՛ այլ հայապատկան առևտրական-տնտեսական տուներու հաղորդագրութիւններն ու լուրերը: Անհրաժեշտ պիտի ըլլայ որ հայ մամուլը կանոնաւորաբար և հրապուրիչ կերպով իր ընթերցողներուն հաղորդէ նաև տեղեկութիւններ աշխարհի ֆինանսական և տնտեսական կացութեան, հարցերուն և իրադրութիւններուն մասին: Ու եթէ թերթերը արդիւնաւէտօրէն կատարեն իրենց դերը՝ բազմաթիւ հայեր, որոնք մինչ այդ չէին մասնակցած հայկական կեանքին՝ հետզհետէ պիտի փոխեն իրենց կեցուածքը, և պիտի մօտենան անոր:

#### **Գ.- Ազգային նպատակներ**

Տնօրէն Ժողովը (Board of Trustees) առանց բնաւ կորսնցնելու իր գործքի ճկունութիւնը՝ կը պարտի պահպանել շարունակականութիւնը Հիմնարկութեան առաջադրանքներուն: Օրինակ, պէտք է մա՛նաւանդ անխախտ պահել ազգային ծառայութեան իր ուղեգիծը, և հետևողակա՛ն՝ իր աշխատանքները այդ կապակցութեամբ:

Ահա՛ գլխաւոր մարզերը իր ազգային նպատակներուն.-

**ա.- Հայաստան՝** առևտրական-ճարտարարուեստական-ֆինանսային

Հիմնել Տնտեսական Յանձնախումբ մը (Economic Committee) յարաբերելու համար Հայաստանի հետ՝ հետևեալ առաջադրանքներով՝

1.- Զարկ տալ Հայաստանի արտաքին առևտրին՝ արտասահմանի հայերո՛ւն հետ, թէ օտար առևտրական հաստատութիւններու.

2.- Օժանդակել Հայաստանի արդիւնաբերութեան՝ որ հասնի բարձրագոյն մակարդակի.

3.- Նպաստել՝ առողջապահական, գիտական թէ՛ այլ միջոցներով՝ Հայաստանի ժողովուրդին կենցաղային մակարդակին բարելաման, և թուական աճումին:

**բ.- Արտասահման՝** առևտրական-ճարտարարուեստական-ֆինանսային

Տնօրէն Ժողովը պէտք է քաջալերէ որ՝

1.- Հայկական առևտրական և ճարտարարուեստական հաս-

տատույթիւններ հիմնուին.

2.- Պէտք է ձգտի որ գոյանան հայկական առևտրական-նարտարարուեստական խմբակցութիւններ.

3.- Պէտք է ի՛նք դառնայ ֆինանսաւորումի գլխաւոր աղբիւրը.

4.- Պէտք է վարկաքարթ-երով (credit card) հայ ձեռնարկուներուն համար թէ՛ «կապ-եր» ապահովէ, և թէ՛ միջազգային վարկ (credit).

5.- Պէտք է ստեղծէ Ապահովագրական մարզ մը՝ թէ՛ դրամ արտադրելու, և թէ՛ հայերու կեանքի մակարդակը բարձր պահելու համար:

**գ.- Համազգային-միջազգային**

1.- Հիմնում՝ «Տագնապի Տնօրինման Հիմնադրամի» մը (Crisis Managemant Trust Fund), գործածելի աղէտներու,- պատերազմ, սով, երկրաշարժ, համաճարակ, կայլն,- ատեն.

2.- Միջազգային յարաբերութիւններու մարզ՝

- Կասպ հաստատել ոչ-հայ ֆինանսային շրջանակներու և խմբակցութիւններու հետ.

- Քաջալերել հայերու թեկնածութիւնը՝ տեղական քաղաքական թէ այլ ընտրութիւններու մէջ:

3.- Հիմնում՝ միջազգային ֆինանսի ազատ գօտիի մը Հայաստանի մէջ:

## V- ՎԵՐՋԱԲԱՆ

Ֆինանսի մասին այս ուսումնասիրությունը՝ իր ծանոթություններէն, սահմանումներէն և բաղդատություններէն անդին՝ կը միտի արթնցնելու ընթերցողին հետաքրքրությունը և զայն մղելու անմիջականօրէն մասնակցելու ֆինանսական ամբողջական դրութեան մը ստեղծումին:

Յուրտ Պատերազմի ասարտէն յետոյ, 1990–ական թուականներէն սկսեալ, ստեղծուած է համաշխարհային նոր տրամաբանութիւն մը (global logic). խախտած են մեր գիտցած բոլոր հանրածանօթ կանոնները:

Ասանդաբար ծանօթ «Ազգային Պետությունը» (nation state) և «քաղաքական անկախությունը» (political sovereignty) այսօր կարիքը ունին վերասահմանումի (redefinition):

Այսօրուան տիրապետող ուժերն են «շրջանային տնտեսությունները» (regional economies), որոնք խարսխուած են հետևեալ չորս սինէրուն վրայ՝

- 1.– Դրամագլուխ և դրամագլուխի ներդրում (capital and capital investment).
- 2.– Ծարտարարուեստ (industry).
- 3.– Տեղեկութիւն (information).
- 4.– Անհատներ (individuals):

Այս չորս ուժերն են որ կը գոյացնեն կամ կ'անհետացնեն շրջաններու կարևորությունը՝ երբ ազատությունը ունենան անարգել հոսելու ազգային սահմաններէն անդին:

Ամէնէն զարգացած և հարուստ երկիրները այսօր արդէն կ'սպրին համաձայն նոր կանոններուն և սկզբունքներուն, որոնք տակաւին երէկ անծանօթ էին մեզի: Այդ երկիրներու շուկաները արդէն մաս կը կազմեն համաշխարհային ասանին (global village) և կը գործեն ազատ շուկայի պահանջներուն համաձայն:

Եթէ պատկերացնենք վիճ մը և անոր մէկ ափին զետեղենք ազատ շուկայի իրականությունն ու անդր–սահմանային (cross-border) առևտրական գործընթացը, ապա միւս ափին պիտի գըտնենք խոշոր թիով համայնքներ, առևտրական հաստատություններ և կարևոր թիով պետություններ, որոնք տակաւին կը տարբերին հին

և նորի պայքարին մէջ:

Ո՛րք է Հայաստանի Հանրապետութիւնը այս պատկերին մէջ:

Իրերու ներկայ դրութեամբ, պատկերացուցէք թէ Ռուսաստանի մէջ արտադրուած «Նիվա» մակնիշի ինքնաշարժ մը կարելի չէ գնել Հայաստանի մէջ, հակառակ Հայաստանի՝ Անկախ Պետութիւններու Համադաշնակցութեան (C.I.S.) անդամ ըլլալուն: Սակայն նոյն ինքնաշարժը կարելի է գնել Թուրքիայէն և ներածել Հայաստան, հակառակ Թուրքիոյ կողմէ գործադրուող շրջափակումին (blockade):

Հետևեալ երեք պարագաներուն բերումով, Հայաստանի Հանրապետութիւնը կորուած է համաշխարհային ազատ շուկայէն.–

1.– Միջազգային և աշխարհագրական.

2.– Տգիտութիւն–անվտանգութիւն–անտարբերութիւն.

3.– Տնտեսական շրջափակում, որ ցեղասպանութեան համազօր արարք է, և որ կը միտի արգելակելու համաշխարհային շուկային Հայաստանի մասնակցութիւնը:

Ծիշդ է թէ դժուար է փոխել հին սովորութիւնները, բայց հայութիւնը պարտաւոր է պատասխան մը գտնելու ներկայ կացութեան: Հակագդեցութիւնը պէտք է ըլլայ համազգային և զանգուածային:

Ակնարկ մը նետենք ներկայիս կիրարկուող վարկերու տոկոսներուն վրայ: Համաշխարհային շուկայի մէջ դրամատուններ աւանդատուին կը վճարեն **տարեկան** երեք առ հարիւր տոկոս. Հայաստանի մէջ **տարեկան** միջին տոկոսը կը կազմէ 36 առ հարիւր: Համաշխարհային շուկայի մէջ դրամատուններ վարկառուէն կը գանձեն **տարեկան** 6–8 առ հարիւր տոկոս, մինչ Հայաստանի մէջ կը գանձուի **ամսակա՛ն** նոյնքան տոկոս:

Հարց կը ծագի թէ ի՞նչպէս Հայաստանը կրնայ մուտք գործել համաշխարհային շուկայէն ներս և մրցիլ արդիւնաւորապէս, մա՛նաւանդ երբ նկատի ունենանք ուրիշ պարագայ մըն ալ,– այսօրուան դրութեամբ ատելի աժան է արտասահմանէն գնել գրեթէ ամէն ինչ՝ քան արտադրել Հայաստանի մէջ:

Տակաւին, իրերու ներկայ դրութեամբ համաշխարհային շուկայի սակերով դրամ գնելու ունակ որևէ ընկերութիւն կամ պետութիւն կրնայ առանց մեծ դժուարութեան Հայաստանը՝ իբրև երկիր և տնտեսութիւն՝ դնել ճորտութեան վիճակի մէջ:

Առաջքը առնելու համար նման հաւանականութեան մը, կը յուսանք որ այս ուսումնասիրութիւնը, Մալխասեան Հիմնարկութեան միւս ուսումնասիրութիւններուն հետ միասնաբար, կը յաջողի ստեղծել այնպիսի տրամադրութիւն, որուն հետևանքն ըլլայ ծնունդը ՆՈՐ ՄՏԱՅՆՈՒԹԵԱՄԲ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԸ, որ, իր կարգին, առաքելակն ըլլայ թէ՛ միջազգային ֆինանսի գաղափարին, և թէ՛ ֆինանսային ինքնաբաւութեան գաղափարին՝ մեր ժողովուրդը Հայաստանի թէ Սփիւոքի մէջ հասցնելու համար համաշխարհային

առանի (global village) լիարժեք բնակիչի մակարդակին:

Ծիզ մը՝ հասկանալու թէ ինչո՞ր որոշ շրջաններ կը հարստանան, մինչ ուրիշներ հակառակ ընթացք կը պարզեն, և թէ ինչո՞ր հնամաշ քաղաքականություններու վրայ հիմնուած հին սկզբունքներ չեն յաջողիր այլևս «ստանց սահմաններու» այս աշխարհին մէջ անհրաժեշտ ուղղութիւնը տալու, պիտի պարզէ հետևեալը Հաստանի պարագային<sup>1</sup>.-

**1.- Դրամագլուխի շուկան**- Ըստ նորագոյն տեղեկություններու, զարգացած երկիրները յագեցած են անելորդ (excess) կանխիկ դրամով: Ծաբոնը առանձինն ունի անելի քան տասը եռիլիոն ամերիկեան տոլարի չօգտագործուած կանխիկ դրամ: Հետևաբար, եթէ Հայաստանը մատուցէ հրապուրիչ պատեհություններ՝ կրնայ վստահ ըլլալ թէ անելորդ դրամագլուխը դիւրութեամբ պիտի հոսի դէպի իր գիրկը:

**2.- Ծարտարարուեստի շուկան** - Իր նկարագրով շատ անելի համաշխարհային է այսօր ան: Միջազգային ընկերություններ դադարած են այլևս իրենց ռազմավարութիւնը (strategy) պետություններու նախապատուութիւններուն հիմամբ ճշդելէ, և զայն խարսխած են բացառաբար իրենց պահանջներուն վրայ՝ զիրենք հետաքրքրող շուկաներէ կամ աղբիւրներէ օգտուելու համար: Տեղափոխուող ընկերություններ իրենց հետ կը բերեն դրամագլուխ, թեքնոլոճի, փորձառու տնօրէններ, և այլն:

**3.- Տեղեկութիւն (information)** - Տեղեկատուական զարգացումը ներկայիս կարելի դարձուցած է որևէ տեղէ ստանց ծախսալի կառոցներ ունենալու աշխատիլ: Դիւրա կարելի է խոստափիլ, այլևս, ծախսալի ճամբորդություններէ, որոնք նաև ժամավաճառութիւն են: Առետրական գործարքներու մեծ մասը կը կատարուի հեռաձայնով, հեռապատճէնով (fax) և էլեկտրոնային թղթատարով (email): ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ ՈՒԺ Է՝ անվիճելիօրէն:

**4.- Անհատը (individual) կամ սպառողը (consumer)** - Սպառողը ևս շատ անելի համաշխարհային մօտեցում որդեգրած է այսօր: Տեղեկատուական հոսքը զինք հաղորդ կը պահէ ամէն ինչի, և ան կ'ուզէ նուազագոյն գինով ունենալ լաւագոյնը՝ ստանց հոգ ընելու թէ ի՞նչ աղբիւրէ կու գայ ան:

1 Միշտ պետք է ի մտի ունենալ թէ տնտեսական վերելքը խարսխուած է չորս սիւներու վրայ՝ ֆինանս, ճարտարարուեստ, տեղեկութիւն, անհատներ: Այս չորս ուժերը յարատևօրէն տնտեսական աիշ կը հասցնեն հո՞ն որ բանական պահանջ և շուկայ կայ՝ ի հեճուկա պետություններու կամքին, օրէնքներու սեղմումներուն, պատերազմներու աներներուն թէ այլ կարգի խոչընդոտներու:

Այս չորս սիւներն ալ տակաւին ամրապնդուած չըլլալով Հաստատանի մէջ՝ արտասահմանեան ներդրումներ (investment) քաջալերելու լուրջ դժուարութեան դէմ-յանդիման կը գտնուի մեր հայրենիքը:

Այս կացութիւնը փոխելու համար ԱՆՀՐԱԺԵԾՏ Է ԲԱՐԵՓՈՒՅԵԼ ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ...: ՀԱՅ ԱՆՀԱՏԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԻ ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՀԱՄԱՐ:

Անհրաժեշտ է որ անմիջապէս մշակուի Ազգային Կրթական Ծրագիր մը, և անոր զուգահեռ և իբրև անոր բաղադրամաս՝ Ազգային Ֆինանսական Կրթական Ծրագիր մը:

Ազգային Ֆինանսական Ծրագիրը կը ներկայանայ երեք ճիւղերով՝

- 1.- Պետական մակարդակ՝ ազգային և համաշխարհային.
- 2.- Ծուկայական-գործնական՝ ազգային և համաշխարհային.
- 3.- Դպրոցական-գործնական՝ դա՛րձեալ ազգային և համաշ-

խարհային:

**Պետականը** արտաքին ուժերու (Միջազգային Հիմնադրամ և շուկայ) ազդեցութեան տակ կ'ապրի հարկադրական որոշ զարգացում մը. սակայն դիտելի է թէ ազգային թևն ու թիրախները՝ յարաբերաբար համաշխարհայինին՝ գոյութիւն չունին տակաւին:

**Ծուկայականը** խելճ կապկումն է (imitation) համաշխարհայինին և ոչի՛նչ ունի ազգային: Աւելի՛ն, հաշը վստահութիւն չունի ազգային ֆինանսին և հայ դրամատուններու վրայ: Չկա՛յն ազգային ֆինանսի առազան մը:

**Դպրոցականը** գոյութիւն իսկ չունի՝ ըլլա՛յն ազգային, ըլլա՛յն համաշխարհային չափանիշով: Ցաւալին այն է որ այս պարագան տեսնել և սրբագրել ուզող անգամ չկայ...:

Կասկածէ վեր է թէ որևէ գաղափար տարածելու համար՝ հասարակութեան միտքը հարկ է պատրաստել այդ ուղղութեամբ: Իսկ միտքը պատրաստելու լաւագոյն դաշտը դպրոցն է: Հետևաբար և անհրաժեշտաբար կը դառնանք կրթական ամբողջական ծրագրի մը մշակման անչեռածգելի տեսութեան և կը կրկնենք՝ ՔԱՅԼ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ, ԵՒ ՔՍԱՆՄԷԿԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՄԱՍ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԱՐԳԱՑԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ԱՆՀՐԱԺԵԾՏ Է ՈՐ ԱՆՄԻԶԱՊԷՍ ՄԾԱԿՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

Եթե կ'ընդունինք որ եկամտի (revenue) մակարդակն ու կարողականությունը կ'ազդեն արտադրության մակարդակին վրայ, ինքնաբերաբար կը հետևի թե որոշած ենք կենցաղի մակարդակի սանդիսամասերէն վեր բարձրանալ՝ բարելաւելու մեր կեանքին որակը:

նոյնպէս կը հետևի թե կարիքը պիտի ունենանք հետևեալ կառոյցին՝

ա.- Դաստիարակութիւն (education)

բ.- Ծրագրում (planning)

գ.- Հիմնարկութիւններ (institutions)

դ.- Ենթակառոյցներ (infrastructures)

Եւ հարկ է որ այս բոլորը իրագործուին ճիշդ տեղին և ատենին, ո՛չ թե երկու սերունդ ետք, օրինակի համար:

**ԼՈՒԾՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿ**

Տրուած ըլլալով որ ֆինանսի բարդ և բազմաճիղ աշխարհին մէջ հայերուս կը պակսին անհրաժեշտ ենթակառուցները՝ ֆինանսի անասման աղբիւրէն իբրև հաւաքականութիւն օգտուելու նկատառումով, մեր առաջնահերթ պարտականութիւններէն մէկը պէտք է ըլլայ հայրենաբնակ հայութեան գործակցութեամբ բազմացումը ֆինանսի բանումը ապահովող կերպերու: Առ այդ, կ'առաջարկենք՝ Հայաստանի մէջ ընտրել փոքր շրջան մը. գի'ւղ մը՝ նախընտրաբար: Տեղւոյն բնակիչներուն մասնակցութեամբ ստեղծել Տնտեսական Զարգացման Խորհուրդ մը՝ տուեալ վայրին համար:

Այդ Խորհուրդին գործակցութեամբ կազմել նախորդ էջերով առաջադրուած կառուցը՝

- |                                |                  |
|--------------------------------|------------------|
| 1.- Դաստիարակչական             | ծրագրի զարգացում |
| 2.- Ծրագրումի (planning)       | ծրագրի զարգացում |
| 3.- Հիմնարկութիւններու         | ծրագրի զարգացում |
| 4.- Օրինական և այլ կառուցներու | ծրագրի զարգացում |

ակնկալելով որ ներգրաւուին՝

- ա.- Դրամագլուխը
- բ.- Ծարտարարուեստը
- գ.- Տեղեկութիւնը
- դ.- Անհատները:

**ԺԱՄԱՆԱԿՆ Է ՈՐ ՈՐԴԵԳՐԵՆՔ, ԽՆԱՄԵՆՔ ԵՒ ԱԾԵՑՆԵՆՔ  
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԻ ՈՐԲԸ:**

# ԲԱՌԱՐԱՆ

անդր-սահմանային - cross-border  
 անհատական/անձնական - private  
 ապա-սեղմում - deregulation  
 ապահովագրություններ - securities  
 ապահովագրագետ - actuarian  
 ապահովագրություն - insurance  
 արգելք - embargo  
 աւանդ - trust  
 անելորդ - excess  
 բաց - deficit  
 գեր-ծախսում - over-spending  
 գործավար - manager  
 գործարք - transaction  
 դրական մթնոլորտի ստեղծում - climate setting  
 դրամազույս - capital  
 դրամազույսի ներդրում - capital investment  
 դրամակծկում - deflation  
 դրամաճ - inflation  
 դրամավար - money manager  
 դրամատնային վարկ - bank credit  
 դրամատուն - bank  
 դրամարկում - capitalization  
 դրամի շուկայ - money market  
 եկամուտ - revenue  
 ենթակառուց - infrastructure  
 երաշխագիր - certificate of deposit  
 երաշխադրում - guarantee  
 զօրակցության ֆոնդ - solidarity fund  
 ընկրկում - recession  
 թոշակի ֆոնդ - pension fund  
 լրամիջոցներ - media  
 խստակեցություն - austerity  
 ծիփուն սակագին - floating rate  
 կանխիկով-հարուստ - cash rich  
 հազարագիտ դրամանիշ - devise  
 համաշխարհային աւան - global village  
 համաֆինանս - macro-finance  
 հանրային գործառնություն - public transaction  
 հանրային փոխ-չարաբերություն - public relation  
 հաստատուն - fixed  
 հոսուն - liquid  
 ճարտարարուեստ - industry  
 մանրաֆինանս - micro-finance  
 միաձուլում/միարկում - merger

միությանից սուրք - unitary tax; tax on global income  
 միջազգային դրամավարություն - international banking  
 լսանձանձում - management  
 լսանձնարարողչէք - commission  
 լսելիէալ դրամագլուխ - disposable capital  
 լետ-արդիւնաբերական - post-industrial  
 ներառք - take-over  
 ներդրու - investor  
 ներծուլում - merger  
 նպաստաւորուող - beneficiary  
 շահամէտ արկածախնդրութիւն - speculation  
 շահամէտ գործարք - speculative investment  
 շահարկումի դրամատուն - investment bank  
 շահարկումի շուկայ - investment market  
 շահութաբերութիւն - return of investment  
 շուկայադրում - marketing  
 շրջանային տնտեսութիւններ - regional economies  
 շրջափակում - blockade  
 ուժատում - depression  
 պահանջք և մատուցում - demand-supply  
 պարտատու - debtor  
 պարտատու - creditor  
 պետական գանձարանի արժեքիշ - treasury bill  
 սակարան - stock exchange  
 սեփական գործառնութիւն - private transaction  
 սպառող - consumer  
 սպասարկութիւններ - services  
 ստացք - acquisition  
 ստորահարկում - under-taxation  
 վարկ - credit  
 վարկագիր - letter of credit  
 վարկանիշ - credit money  
 վարկատու - creditor  
 վարկաքարթ - credit card  
 տեղեկութիւն - information  
 տնտեսութիւն - economy  
 սուրք - tax  
 փոխադրական ծախս - transportation cost  
 փոխառութիւն - borrowing  
 փորձանաւոր դրամագլուխ - risk capital  
 օտար փոխանակագին - foreign exchange



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ՄՈՒՏՔ	VII
ՖԻՆԱՆՍ	
I - Սահմանում և ծանօթություն	3
II - Ֆինանսը	4
III - Ֆինանսական կացությունը հայկական կեսնքէ ներս	18
IV - Ստեղծումը «Ֆինանսի հայկական միջազգային հաստատություն» մը	22
V - Վերջաբան	28
Լուծումի առաջարկ	33
ԲԱՌԱՐԱՆ	34

